«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ



«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2025

ՆԱԽԱԲԱՆ

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի (այսուհետ՝ ՄՈՒՀ կամ քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումի համաձայն:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգում և իրականացնում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» (ՈԱԱԿ) հիմնադրամը: Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011թ. հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Գնահատումը կատարվել է ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից: Վերահավատարմագրման գործընթացն իրականացվել է քոլեջի ֆինանսավորմամբ: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Զեկույցը պարունակում է քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ 4
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 5
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 12
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 12
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 12
ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 15
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 15
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 18
III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 25
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 32
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 38
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 42
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 46
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 49
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 52
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 56
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 61
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 62
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 62
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 64
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 67
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 70
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 71
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 72

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

ՄՈՒՀ-ի գործունեությունը և պատմությունը

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջը (ՍՊԸ) հիմնադրվել է 1995 թվականին՝ «Երևանի տնտեսա-իրավագիտական համալսարան» ՍՊԸ-ի կառուցվածքային վերակազմակերպման և դրանից առանձնացման արդյունքում:

Քոլեջի առաքելությունն է. «Պատրաստել այնպիսի մասնագետներ, որոնք իրենց մասնագիտական գիտելիքներով, կարողություններով և պրակտիկ հմտություններով համարժեք կարձագանքեն առկա մարտահրավերներին համապատասխան գործողություններով, կաջակցեն ՀՀ տնտեսության զարգացմանն ու կայացմանը»:

Հաստատությունը գտնվում է ինստիտուցիոնալ հավատարմագրման երկրորդ շրջափուլում: Նախորդ հավատարմագրման արդյունքում քոլեջը ստացել է պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ երկու տարի ժամկետով:

ՄՈՒՀ-ի զարգացման ուղղությունները և կրթական ծրագրերը

Քոլեջը Որակավորումների ազգային շրջանակի հինգերորդ մակարդակում իրականացնում է 4 կրթական ծրագիր՝ հիմնական և միջնակարգ կրթության հիմքով՝ «Քույրական գործ», «Մանկաբարձական գործ», «Դեղագործություն» և «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտություններով: Հաստատությունում ներկայումս կրթություն է ստանում 208 ուսանող:

Քոլեջն իրականացնում է նաև նախապատրաստական դասընթաց «Քույրական գործ» մասնագիտությամբ, որին 2024 թվականին մասնակցել է 11 սովորող Հնդկաստանից և Շրի Լանկայից: Քոլեջն ունեցել է նաև դիմորդներ Գանայի Հանրապետությունից, որոնք ՀՀ չեն կարողացել ժամանել՝ մուտքի վիզայի արտոնագիր չստանալու հանգամանքով պայմանավորված:

Քոլեջում դասավանդում են 34 դասախոս, որոնցից 27-ը հիմնական, 7-ը՝ համատեղությամբ, իսկ պրակտիկ փորձառություն ունեցող դասավանդողների թիվը 18 է: Դասախոսներից 32-ն ունեն բարձրագույն կրթություն, 2-ը՝ միջին մասնագիտական: Քոլեջի շրջանավարտներից մեկը դասավանդում է քոլեջում:

Ըստ 2023-2024թթ. շրջանավարտների հետագծի վերաբերյալ առկա տվյալների՝ 73 շրջանավարտներից 3-ը շարունակում են ուսումը բուհերում՝ համապատասխան մասնագիտությամբ, 59-ը աշխատում են, որից 48-ը՝ իրենց մասնագիտությամբ, 11-ը՝ ոչ իրենց մասնագիտությամբ, իսկ գործազուրկ շրջանավարտների թիվը 11 է:

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատման գործընթացում փորձագիտական խումբը հաշվի է առել քոլեջի սահմանափակ պատասխանատվության ընկերություն լինելու հանգամանքը, նրա դերն ու նշանակությունը ՀՀ բժշկության ոլորտում միջին մասնագիտական կրթությամբ մասնագետների թողարկման հարցում: Հաշվի է առնվել նաև այն հանգամանքը, որ ՄՈՒՀ-ը 2023 թվականին անցել է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց, որի արդյունքում քոլեջին շնորհվել է պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 2 տարի ժամկետով:

Հավատարմագրման նախորդ փուլից հետո քոլեջը ունեցել է համեմատաբար կարճ ժամանակահատված՝ փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման և տրված խորհրդատվությունների իրականացման համար: Այդ ընթացքում քոլեջն իրականացրել է որոշակի քայլեր՝ հատկապես փաստաթղթային բազայի մշակման, արտաքին շահակիցների ներգրավման և ռեսուրսների բարելավման ուղղությամբ: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբն արձանագրել է, որ նախորդ հավատարմագրման ընթացքում տրված որոշ խորհրդատվություններ կամ ամբողջությամբ չեն իրականացվել, կամ գտնվում են իրագործման նախնական փուլում: Քոլեջի հիմնական խնդիրներն են երկարաժամկետ զարգացման բիզնես ռազմավարության, նյութական և ֆինանսական ռեսուրսների պլանավորման ու կառավարման հստակ քաղաքականությունների և մեխանիզմների, ինչպես նաև կարճաժամկետ պլանավորման համակարգված մոտեցման բացակայությունը:

Քոլեջը քայլեր է ձեռնարկել կառավարման համակարգի բարելավումների ուղղությամբ՝ մշակելով համապատասխան կանոնակարգեր և ձևաչափեր: Այսուհանդերձ, քոլեջի կառավարման համակարգում որոշումների կայացումը չի հիմնվում համակարգային վերլուծության վրա, իսկ պլանավորման գործընթացներում շահակիցների մասնակցությունը դեռևս սահմանափակ է: Տարեկան պլանների, հաշվետվությունների և ռազմավարական նպատակների միջև փոխկապակցվածությունը թույլ է, իսկ գնահատման մեխանիզմներում պարբերական ցուցանիշների կիրառումը բացակայում է: Կառավարչական որոշումները հիմնականում իրավիճակային բնույթ են կրում՝ առանց որոշումների կայացման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման ու վերլուծության մեխանիզմների: Որակի ապահովման համակարգի միջոցով հավաքագրվում են տվյալներ, սակայն դեռևս ձևավորման փուլում է՝ առանց Ռազմավարական ծրագրին ներդաշնակ պլանների և արդյունքների գնահատման

գործիքակազմի: Հաշվետվությունները մեծամասամբ նկարագրական են՝ առանց վերլուծական բաղադրիչի, ինչը խոչընդոտում է տվյալների հիման վրա բարելավումների պլանավորմանը:

Կրթական ծրագրերը կառուցված են պետական չափորոշիչների հիմքով, վերանայման ենթարկվել են՝ արձագանքելով գործատուների հետ ունեցած հաղորդակցությանը: Այնուամենայնիվ, վերջնարդյունքները ոչ միշտ են արտացոլում մոդուլների բովանդակության պահանջները կամ ապահովում գիտելիքի, հմտությունների և կարողությունների ամբողջական համադրությունը: Գնահատման քաղաքականությունը հիմնականում սահմանում է գնահատման ձևերը և քանակական սանդղակները, սակայն գնահատման հստակ չափորոշիչներ, ռուբրիկներ, գործնական կարողությունների ամբողջական ստուգում բժշկական կրթության բնույթին համապատասխան՝ չեն ներդրվել: Դասախոսական կազմը համալրված է պրակտիկ փորձառությամբ մասնագետներով, առկա է երիտասարդացման միտում, բայց դասավանդման մեթոդների զարգացման, վերապատրաստման պլանավորված քաղաքականություն և ներքին փորձի փոխանակման մշակույթ՝ դեռևս ներդրված չեն: Գիտելիքի փոխանցման գործիքակազմը գերազանցապես դասախոսակենտրոն է՝ առանց ձևավորող գնահատման մեթոդների և ուսանողների կարիքներին համապատասխան մեթոդների կիրառման:

Ուսումնական միջավայրն ապահովված է հիմնական ռեսուրսներով, լաբորատորիաները և մասնագիտական կաբինետները համալրվում են, սակայն քոլեջը չունի ռեսուրսների արդիականացման շարունակական ֆինանսական քաղաքականություն: Ներդրումները գերազանցապես իրականացվում են հիմնադրի միջոցներով՝ առանց ֆինանսական աղբյուրների բազմազանեցման ռազմավարության: Հաշվետվությունները ցույց են տալիս ռեսուրսներից օգտվողների ընդհանուր գոհունակություն, սակայն առկա չէ ռեսուրսների մաշվածության, թարմացման պարբերականության կամ օպտիմալ բաշխման վերաբերյալ համակարգային վերլուծություն: Այսկերպ, հիմք ընդունելով նախորդ հավատարմագրումից հետո կատարված ռեսուրսային բարելավումները, պրակտիկ փորձառությամբ մասնագետներով դասախոսական կազմի համալրումը, կրթական ծրագրերում գործնական կարողությունների ձևավորմանը միտված առաջադրանքների ներառումը՝ կարելի է նշել, որ քոլեջն ապահովում է շնորհվող որակավորումների արժանահավատությունը:

Քոլեջը ձեռնարկել է մի շարք նախաձեռնություններ միջազգայնացման ուղղությամբ, ինչպես նաև ձևավորել է գործընկերային կապեր մի շարք տեղական և արտասահմանյան քոլեջների հետ: Սակայն համագործակցություններից ակնկալիքների, դրանց գնահատման չափելի արդյունքների սահմանման ռազմավարություն դեռևս չկա: Օտար լեզվի իմացության մակարդակը շարունակում է մնալ խոչընդոտ միջազգային շարժունության ապահովման և համագործակցային ծրագրերի մասնակցության համար:

Հետազոտական գործունեությունը ռազմավարական փաստաթղթերում դիտարկվում է որպես առաջնահերթություն, սակայն կրթական ծրագրերում հետազոտական աշխատանքները դեռևս չեն փոխկապակցվում ուսումնական գործընթացին: Ուսանողների կողմից իրականացվող աշխատանքները չեն ապահովում վերլուծական, ինքնուրույն և քննադատական մտածողության ձևավորում: Դասախոսների գիտական գործունեությունը հիմնականում կապված չէ ուսանողների ուսումնառության հետ կամ կրթական գործընթացի բարելավման ուղղությամբ ձեռնարկվող

մեթոդաբանական նախաձեռնություններին: Խրախուսման համակարգում չեն տարբերակվում ուսումնառության վրա ազդեցություն ունեցող հետազոտական նախաձեռնությունները:

Քոլեջն ապահովում է տեղեկատվության թափանցիկություն և մատչելիություն պաշտոնական կայքի, սոցիալական մեդիայի և գործընկերային հարթակների միջոցով, սակայն հասարակության հետ հաղորդակցման ռազմավարություն, ինչպես նաև հետադարձ կապի կազմակերպման հստակ մեխանիզմներ դեռևս մշակված չեն:

Փորձագիտական խումբն արձանագրում է, որ արմատական փոփոխություններ իրականացնելու համար քոլեջը, ունենալով ընդամենը երկու տարի ժամանակ, մեկնարկել է բարելավման գործընթացը բոլոր ուղղություններով: Հիմք ընդունելով նախորդ հավատարմագրման շրջանակում տրված խորհրդատվությունները՝ քոլեջը կարողացել է որոշակի գործնական բարելավումներ իրականացնել, սակայն կառավարման և երկարաժամկետ զարգացման համակարգերը դեռևս ամբողջությամբ կայացած չեն: Բարելավումների շարունակականության ապահովման համար անհրաժեշտ է ձևավորել ավելի արդյունահենք և ռազմավարական կառավարում, կրթական գործընթացի որակական մշտադիտարկման գործիքակազմ և ռեսուրսների կայուն զարգացման քաղաքականություն, որոնք հիմք կդառնան հաստատության առաքելության և ռազմավարական նպատակների լիարժեք իրագործման ու հաստատության կայուն զարգացման համար:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. քոլեջի շրջանավարտների մասնագիտական գործունեության իրականացումը և պահանջարկը տեղական աշխատաշուկայում,
2. ուսանողների ակտիվ մասնակցությունն իրենց առնչվող որոշումների կայացման գործընթացներում,
3. քոլեջի ռեսուրսների շարունակական համալրումներն ուսանողների գործնական կարողությունների զարգացման նպատակով,
4. պրակտիկ փորձառությամբ դասախոսների ներգրավման աճը դասավանդման գործընթացում,
5. տեղական և միջազգային համագործակցությունների ընդլայնումը փորձի փոխանակման նպատակով,
6. բուժհաստատությունների և դեղատնային ցանցերի հետ ակտիվ համագործակցությունն ուսանողների պրակտիկաների կազմակերպման համար,
7. տեղեկատվական հարթակների արդյունավետ կիրառումն ընթացակարգերի, փաստաթղթերի արտաքին հաշվետվողականության և թափանցիկության ապահովման նպատակով:

Հաստատության թույլ կողմերն են.

1. երկարաժամկետ զարգացմանն ուղղված բիզնես ռազմավարության և ֆինանսական քաղաքականության բացակայությունը,

2. կրթական ծրագրերի կառավարման պատասխանատվությունների և ամբիոններում ծրագրերի մշտադիտարկման ու բարելավման գործառույթների ոչ արդյունավետ բաշխումը,
3. բժշկական կրթությանը համապատասխան գնահատման մեխանիզմների և գործիքների անկատարությունը,
4. դասախոսական կազմի մենթորության և լավագույն փորձի տարածման մեխանիզմների սակավությունը,
5. ստորաբաժանումների միջև հորիզոնական համագործակցության թույլ մակարդակը և հաշվետվությունների թույլ վերլուծական բնույթը,
6. որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլի ոչ ամբողջական կիրառումը քոլեջի գործընթացներում,
7. հետազոտական հստակ ուղղվածության բացակայությունը և կրթական ծրագրերում վերլուծական, նորարարական բաղադրիչի թույլ արտահայտումը,
8. շրջանավարտների մասնագիտական հետագծի վերաբերյալ տվյալների հավաքագրման և պարբերական թարմացման մեխանիզմների անկատարությունը։

Խորհրդատվություններ.

Տվյալահենք կառավարում

1. Հստակեցնել քոլեջի առաքելությունը՝ շեշտադրելով բժշկության և առողջապահության ոլորտում հաստատության դերակատարությունը և հաշվի առնելով շահակիցների ակնկալիքները։
2. Սահմանել հաստատության զարգացման ուղղություններին և ռեսուրսներին համապատասխան հստակ ու չափելի ԳԱՑ-եր՝ ցույց տալու հաստատության մրցակցային առավելությունները։
3. Ներդնել քոլեջի երկարաժամկետ զարգացմանն ուղղված կառավարման բիզնես մոդել՝ ընդգրկելով կառավարման, ռեսուրսների պլանավորման, կրթական ծրագրերի և ռազմավարական նպատակների իրականացման ոլորտները։
4. Համակարգել կրթական ծրագրերի կառավարման գործառույթները՝ հստակեցնելով կրթական ծրագրերի պատասխանատուների դերերն ու պարտականությունները։
5. Ներդնել մեխանիզմներ՝ ստորաբաժանումների միջև հորիզոնական կապերի ամրապնդման և աշխատանքների փոխկապակցման նպատակով։
6. Հաստատել ֆինանսական ռեսուրսների բաշխման ու տնօրինման քաղաքականություն՝ ֆինանսական ռիսկերի կառավարման և քոլեջի երկարաժամկետ զարգացման ապահովման համար։
7. Ներդնել կարճաժամկետ տարեկան պլանավորման մեխանիզմներ՝ կապակցելով հաստատության երկարաժամկետ նպատակներին և սահմանելով դրանց գնահատման հստակ ցուցիչներ։

8. Շարունակաբար և հստակ մեթոդաբանությամբ հավաքագրել կրթական ծրագրերի արդյունավետության վերաբերյալ տվյալներ՝ շնորհվող որակավորումների արժանահավատությունը և շրջանավարտների մրցակցային առավելությունը ցույց տալու նպատակով:
9. Շարունակաբար գնահատել կատարվող փոփոխությունների արդյունավետությունը՝ կառավարչական որոշումների հիմքում դնելով հավաստի տվյալներ:
10. Մշակել որակի ապահովման տարեկան աշխատանքային հստակ պլան՝ սահմանելով վերհանվող կարիքների հիմնական ուղղությունները և դրանց համապատասխան գնահատման գործիքները:
11. Որակի ապահովման համակարգի գործողությունները և ՈԱ պատասխանատուի գործառույթներն ուղղել կարիքների վերհանմանը, բարելավման ուղղությունների առաջարկմանը և դրանց գնահատմանը՝ առանց գործընթացների անմիջական կազմակերպման և իրականացման մասնակցության:
12. Վերանայել կարիքների վերհանման հարցաշարերը՝ ավելացնելով բաց հարցերի շրջանակը՝ որակական վերլուծություն իրականացնելու և շահակիցների կարիքներն ու առաջարկները ներդնելու կառավարչական որոշումների հիմքում:

Որակավորումների արժանահավատ շնորհում


13. Ձևավորել կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ փաթեթներ՝ ներառելով դասընթացի իրականացման համար անհրաժեշտ մոդուլային ծրագրերի մանրամասն նկարագրությունները, օրացուցային թեմատիկ պլանները, ուսումնառության պլանները, ուսանողներին տրվող առաջադրանքները, ուսումնառության և դասավանդման նյութերը:
14. Ներդնել բժշկական կրթության տրամադրման համար դասավանդման և ուսումնառության ինտերակտիվ մեթոդների ընտրության մոտեցումներ և ներքին լավ փորձի վերհանման ու տարածման մեխանիզմներ:
15. Ներդնել բժշկական կրթության առանձնահատկություններին համապատասխան գնահատման մեթոդներ՝ ներառելով հստակ կատարման չափանիշներ ուսանողների բոլոր կարողությունների գնահատման և անհրաժեշտ հետադարձ կապի տրամադրման նպատակով:
16. Մոդուլային ծրագրի յուրաքանչյուր ուսումնառության արդյունքի համար սահմանել համապատասխան գնահատման միջոց՝ մեկ արդյունքից մյուսին անցումն ապահովելու և ուսումնառության ընթացքի արդյունավետությունը բարձրացնելու համար:
17. Ներդնել շրջանավարտների կարիքների և գործատուների ակնկալիքների վերլուծության հիման վրա կրթական ծրագրերի մշտադիտարկման մեխանիզմներ՝ ծրագրերը շարունակաբար համապատասխանեցնելու աշխատաշուկայի պահանջներին:

18. Դասալսումների արդյունքների վերլուծության հիմքով ներդնել դասախոսական կազմի ներքին լավ փորձի տարածման մեխանիզմներ՝ նպաստելու փորձի փոխանակմանը և մասնագիտական առաջընթացին:
19. Ֆինանսական կայունության ապահովման նպատակով ձևավորել երկարաժամկետ ֆինանսական քաղաքականություն՝ հիմնվելով կրթական ծրագրերի զարգացման առաջնահերթությունների վրա:
20. Ներդնել ֆինանսական աղբյուրների բազմազանեցման մեխանիզմներ՝ ներառյալ դրամաշնորհային ծրագրերի օգտագործումը, մասնագիտական ոլորտային դասընթացների կազմակերպումը և այլընտրանքային ֆինանսական մուտքերի ստեղծումը:

Երկարաժամկետ զարգացում

21. Ներդնել շրջանավարտների զբաղվածության և մասնագիտական առաջընթացի պարբերական դիտարկման ու թարմացման մեխանիզմներ՝ գնահատելու թողարկված շրջանավարտների մասնագիտական կարողությունների համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին:
22. Խթանել ուսանողների կարիերային նպաստող միջոցառումների կազմակերպումն ու իրականացումը՝ նպատակաուղղված ուսանողների փոխանցելի հմտությունների զարգացմանը:
23. Հստակեցնել ուսանողներին տրվող հետազոտական աշխատանքների նպատակներն ու գնահատման չափանիշները՝ ընդգծելով մասնագիտական մտածելակերպի ձևավորումը և նպաստելով ինքնուրույն դատողությունների իրականացմանը:
24. Ներդնել դասախոսների հետազոտական աշխատանքների իրականացման և ուսումնառության փոխկապակցման մեխանիզմներ:
25. Իրականացնել հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցման միջոցառումներ՝ հաշվի առնելով քոլեջի ոլորտային առանձնահատկությունները:
26. Ապահովել պաշտոնական կայքի անգլերեն համարժեքության առկայությունը և տեղեկատվության ամբողջական հասանելիությունը՝ օտարերկրյա դիմորդներին տեղեկատվության հասանելիությունն ու միջազգային համագործակցության հնարավորությունները ընդլայնելու նպատակով:
27. Սահմանել արտաքին և միջազգային համագործակցություններից ակնկալիքները՝ մշակելով դրանց արդյունավետությունն ու ազդեցությունը գնահատելու հստակ չափելի ցուցիչներ:
28. Հստակեցնել արտաքին կապերի պատասխանատվության շրջանակը՝ համապատասխան գործառույթներն ամրագրելով դրանք իրականացնող աշխատակիցների պաշտոնի նկարագրերում:
29. Շարունակաբար բարելավել ներքին շահակիցների օտար լեզվի իմացությունը՝ խթանելու միջազգային շարժունության ծրագրերին նրանց մասնակցության ակտիվացումը և մասնագիտական օտարալեզու գրականության արդյունավետ կիրառումը:

30. Քայլեր ձեռնարկել Էրազմուս+ ծրագրերում ներգրավվելու ուղղությամբ՝ խթանելու քոլեջի դասախոսների կարողությունների զարգացման հնարավորությունները, համանման քոլեջների հետ համագործակցությունը կրթական ծրագրերի համեմատական վերլուծության, լավագույն փորձի տեղայնացման նպատակով։



Գայանե Ավետիսյան
Փորձագիտական խմբի ղեկավար

15-ը օգոստոսի, 2025 թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի[1] կողմից.

Գայանե Ավետիսյան՝ աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Շիրակի պետական համալսարանի Որակի ապահովման բաժնի պետ, փորձագիտական խմբի ղեկավար:

Ռոզա Գրիգորյան՝ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի Դեղագործական և ատամնատեխնիկական մասնագիտական մոդուլների ամբիոնի վարիչ, փորձագիտական խմբի անդամ:

Արշակ Մարկոսյան՝ Հայկական բժշկական ինստիտուտի դասախոս, փորձագիտական խմբի անդամ:

Անգելինա Տոնոյան՝ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈՒԱԱԿ Քաղաքականության մշակման բաժնի մասնագետ **Մերի Բարսեղյանը**:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում՝ համակարգողը, ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջը պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով: ՈՒԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո քոլեջի և ՈՒԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Ինքնավերլուծություն

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացվել է 08.05.2025 թ.-ին: Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության ղեկավար կազմի, վարչական, դասախոսական և ուսումնաօժանդակ համակազմի, ուսանողների և արտաքին շահակցի ներգրավմամբ:

[1] Հավելված 1. Փորձագիտական խմբի անդամների ինքնակենսագրականներ

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց:

Նախնական այց

2025 թվականի հունիսի 12-ին հանդիպում է տեղի ունեցել **«Գրիգորիս»** բժշկա-հումանիտար քոլեջի ղեկավար կազմի հետ: Հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը: Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակցույցը[2], ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել **2025 թ. հունիսի 25-27-ն** ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ, մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Առաջնորդվելով Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, ինչպես նաև դասալսումներ, ավարտական աշխատանքների պաշտպանության և պրակտիկաների, փաստաթղթերի ուսումնասիրություն[3], ռեսուրսերի դիտարկում[4] և այլն: Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել քոլեջի կողմից ներկայացված և ՈԱԱԿ-ի կողմից ընտրված կրթական ծրագրերի պատասխանատուների, դասավանդող դասախոսների և ուսանողների հետ:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

---


[2] Հավելված 2. Փորձագիտական այցի ժամանակացույց

[3] Հավելված 3. Ուսումնասիրված փաստաթղթերի ցանկ

[4] Հավելված 4. Փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրված ռեսուրսներ

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը փորձագիտական խմբի բոլոր անդամների համաձայնեցումից հետո տրամադրվել է քոլեջին 2025թ. օգոստոսի 1-ին: Օգոստոսի 4-ին քոլեջը ներկայացրել է իր համաձայնությունը փորձագիտական զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ: Այնուհետև փորձագիտական խումբը պատրաստել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի բոլոր անդամների կողմից հաստատվելուց հետո տրամադրվել է քոլեջին:



Մերի Բարսեղյան
Փորձագիտական խմբի համակարգող

15-ը օգոստոսի, 2025 թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի առաքելությունը ձևակերպված է 2024-2028 թթ. Ռազմավարական զարգացման ծրագրում (այսուհետ՝ ՌԶԾ)։ Նախորդ հավատարմագրման շրջանակում քոլեջը խորհրդատվություն է ստացել հստակեցնելու առաքելությունը՝ շեշտադրելով բժշկության ոլորտում մասնագետներ պատրաստելու իր դերը։ Փորձագիտական ուսումնասիրություններից և նախորդ ու գործող Ռազմավարական ծրագրերի համադրությունից պարզ դարձավ, որ քոլեջի առաքելությունը և ռազմավարական նպատակներն ու խնդիրներն էական փոփոխությունների չեն ենթարկվել։ Քոլեջի առաքելությունն է. «Պատրաստել այնպիսի մասնագետներ, որոնք իրենց մասնագիտական գիտելիքներով, կարողություններով և պրակտիկ հմտություններով համարժեք կարձագանքեն առկա մարտահրավերներին համապատասխան գործողություններով, կաջակցեն ՀՀ տնտեսության զարգացմանն ու կայացմանը»։ Քոլեջը միջին մասնագիտական կրթություն է տրամադրում ՈՒՇ-ի 5-րդ մակարդակին համապատասխան՝ իրականացնելով միջին մասնագիտական 4 բժշկական կրթական ծրագիր։ Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ քոլեջը շեշտադրում է տեղական աշխատաշուկայի համար մրցունակ, գործնական կարողություններ ունեցող բժշկական ոլորտի մասնագետների պատրաստումը։

2023-2024 ուսումնական տարվա շրջանավարտների հետազոտության դիտարկումից պարզվել է, որ քոլեջի շրջանավարտների մոտ 66%-ը ավարտելուց անմիջապես հետո անցնում է մասնագիտական աշխատանքի, իսկ շուրջ 4%-ը շարունակում է կրթությունը բժշկական ուղղվածության բարձրագույն կրթական ծրագրերում։ Հարկ է նշել, որ քոլեջը չի առանձնացրել իր շրջանավարտների մրցակցային առավելությունները և չի վերլուծել մասնագիտական աշխատանքի անցնելու ուղղությունները, ինչի արդյունքում կարող էր պլանավորել կամընտրական առարկաները, պրակտիկայի վայրերը, սահմանել հետազոտական ուղղությունները։

Քոլեջի 2024-2028 թթ. Ռազմավարական զարգացման ծրագրով սահմանված են իրագործման ուղիներ հետևալ նպատակների ուղղությամբ՝ կառավարում և վարչարարություն, կրթական գործունեություն, ենթակառուցվածքներ և ֆինանսական ռեսուրսներ, ուսանողակենտրոն քաղաքականություն, արտաքին կապեր և միջազգայնացում, արդիական հետազոտություններ և նորարարություն, որակի ապահովման ներքին համակարգ։

Ռազմավարական ծրագրերի, կատարողական զեկույցների դիտարկումներից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նախորդ հավատարմագրումից հետո քոլեջը ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար արդիականացրել է ռեսուրսները, ընդլայնել համագործակցության պայմանագրերը փորձի փոխանակման ուղղությամբ, մեկնարկել է կրթական ծրագրերի բարելավման գործընթացները, տեղեկատվության հասանելիության ապահովման համար ակտիվացրել և համալրել է պաշտոնական կայքը, կառավարման մարմիններում և ՈՒԱ գործընթացներում ավելացրել ուսանողների ներգրավվածությունը կարիքների վերհանման և մասնակցային որոշումների կայացման նպատակով և այլն: Այսուհանդերձ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը դեռևս հստակորեն չի պլանավորել և քայլեր իրականացրել ըստ ռազմավարական առաջնահերթությունների ֆինանսների բաշխման, բոլոր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի ներդրման, նախատեսված համատեղ հետազոտական աշխատանքների իրականացման ուղղություններով:

Ռազմավարական նպատակների իրականացման համար քոլեջը կազմել է պլան-ժամանակացույց, որտեղ նշված են իրականացվող միջոցառումները, ժամկետները, պատասխանատուները, անհրաժեշտ ռեսուրսները, ակնկալվող արդյունքները: Քոլեջի գործողությունների պլանում կատարման ժամկետները հստակ սահմանված են՝ ըստ ուսումնական տարիների և կիսամյակների: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ մի շարք դեպքերում ակնկալվող արդյունքները չափելի չեն կամ վերացական բնույթ ունեն: Օրինակներ են «գործող համակարգ», «հարցումների արդյունքներ», «արձանագրություններ» ձևակերպումները, որոնք առանց կոնկրետ չափանիշների և ցուցանիշների չեն կարող ապահովել արդյունքների իրական գնահատում: Փորձագիտական վերլուծության և քոլեջի նպատակների ու համապատասխան գործողությունների համադրման արդյունքում պարզ է դարձել, որ ակնկալվող արդյունքները միշտ չէ, որ բխում են տվյալ գործողությունից կամ տրամաբանական կերպով արտացոլում դրա նպատակն ու բովանդակությունը: Այսպես, օրինակ՝ «Բազմազանեցնել քոլեջի մասին տեղեկատվության տարածման միջոցները՝ նպաստելով քոլեջի հեղինակության բարձրացմանը» գործողության համար սահմանված է «հարցումների անցկացում, միջոցառումների արձանագրություններ» ակնկալվող արդյունքը: Սակայն այս արդյունքները չեն արտացոլում ոչ տեղեկատվության տարածման միջոցների բազմազանեցումը, ոչ էլ քոլեջի հեղինակության բարձրացման մակարդակը կամ դրա ուղղությամբ գրանցված առաջընթացը:

Ըստ «Ներքին և արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման քաղաքականության՝ քոլեջի ներքին շահակիցներն են ուսանողներն ու աշխատակազմը, իսկ արտաքին շահակիցները՝ շրջանավարտները, գործատուները, դիմորդները, ծնողները, ոլորտի պետական և մասնագիտական կառույցները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջն իր զարգացման ուղղությունները նախանշելիս քննարկումներ է ունենում շահակիցների հետ՝ ակտիվորեն ներգրավելով նաև Միասնական սոցիալական ծառայության ներկայացուցիչ արտաքին շահակցին հատկապես կառավարման և ֆինանսական ուղղությունների սահմանման հարցերում: Զարգացման ուղղությունների սահմանման գործընթացներում առավել քիչ են ներգրավված գործատուները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներքին և արտաքին

շահակիցները կարևորում են քոլեջի դերը տեղական աշխատաշուկայի համար բժշկական ուղղությամբ մասնագետների պատրաստման գործընթացում և հիմնականում նույն պատկերացումներն ունեն քոլեջի զարգացման ուղղությունների, այդ թվում՝ օտարերկրյա դիմորդների ընդունելության վերաբերյալ՝ որպես ֆինանսների ընդլայնման ևս մեկ հնարավորություն։

ՌԾ-ի գնահատման համար քոլեջը որպես մեխանիզմ դիտարկում է տնօրենի ու ստորաբաժանումների ղեկավարների տարեկան կատարողական զեկույցները, որոնք փոխկապակցվում են Ռազմավարական ծրագրին։ Զեկույցներն ամփոփում են յուրաքանչյուր տարվա համար կատարված գործողությունները՝ հիմնականում առանց վերլուծական բաղադրիչի և բարելավման գործողությունների պլանավորման։

Չնայած քոլեջը սահմանել է 2024-2028 թթ. ռազմավարական նպատակների գնահատման ցուցիչներ, սակայն դրանց մեծ մասը ձևակերպված է ընդհանուր և ոչ կոնկրետ ձևով։ Օրինակ՝ ցուցիչների չափման միավորները («գործող կարգ», «վեբ-կայք») չեն արտահայտում չափելի արդյունք։ Բացի այդ, որոշ ցուցանիշներ ձևակերպված են արդյունքի, ոչ թե ազդեցության մակարդակում և չեն արտացոլում ռազմավարական նպատակների իրագործման մակարդակը։ Քոլեջը չի ապահովել նաև կապ արդյունքի չափման և համապատասխան գործողության միջև։ Օրինակ՝ «դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի կարգ» ձևակերպումը չունի հստակ չափման մեխանիզմ կամ սահմանված առաջընթացի սահմանաչափեր։ Նկատվում է նաև, որ տվյալ ցուցիչների վերլուծությունը չի օգտագործվում կազմակերպության մրցակցային առավելությունների, կրթական առաջարկի բարելավման կամ զարգացման ռազմավարությունների հիմնավորման համար։ Քոլեջը դեռևս չի իրականացրել գործող ցուցիչների կամ կիրառվող մեխանիզմների գնահատում՝ պարզելու դրանց գործնական արժեքը ռազմավարական կառավարման և շարունակական բարելավման գործընթացներում։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը բժշկության ոլորտում ապահովում է կրթական ծրագրերի կայուն իրականացում, ինչը նպաստում է միջին մասնագիտական կրթությամբ մասնագետների շարունակական պատրաստման համար։ Այս հիմքի վրա հնարավոր է զարգացնել ավելի նպատակային ռազմավարություն, որը կհենվի շրջանավարտների աշխատանքի տեղավորման ուղղությունների բացահայտման վրա, ինչը հնարավորություն կտա կրթական ծրագրերը համապատասխանեցնել կոնկրետ ոլորտային պահանջներին։

Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի առաքելության մեջ բժշկական ուղղվածության դերի ավելի հստակ ձևակերպումը կարող է ծառայել որպես ռազմավարական ուղղությունների ճշգրտման գործիք՝ հաստատության դիրքավորումը դարձնելով ավելի կենտրոնացված և տարբերակելի։ Այսպիսի մոտեցումը հնարավորություն կտա ոչ միայն խորացնել գործատուների հետ համագործակցությունը, այլև կառուցել նոր գործընկերություն՝ մասնավորապես պրակտիկայի, համատեղ հետազոտությունների և շրջանավարտներին աշխատանքի տեղավորվելու նպատակով։

Փորձագիտական խումբը դիտարկում է, որ Ռազմավարական ծրագրում ներքին շահակիցների կարիքների որոշակի արտացոլումը կարող է ունենալ համակարգային ազդեցություն կառավարման արդյունավետության վրա: Նման զարգացումը կհանգեցնի ուսանողների և աշխատակազմի ավելի բարձր ներգրավվածության և պատասխանատվության ռազմավարական որոշումների կայացման գործընթացներում:

Միևնույն ժամանակ, շահակիցների՝ հատկապես գործատուների մասնակցության պակասը ռազմավարական գործընթացներին կարող է սահմանափակել ծրագրերի կապը շուկայի փոփոխվող պահանջների հետ: Քոլեջը կարող է դիտարկել շահակիցների ներգրավման նպատակային ռազմավարություն՝ կազմակերպելով թեմատիկ ֆոկուս-խմբեր կամ ձևավորելով գործատուների մշտական խորհրդատվական խորհուրդ, ինչը ոչ միայն կխթանի վստահությունը հաստատության նկատմամբ, այլ նաև կհանգեցնի առաջարկների քննարկմանը և ըստ դրանց կրթական ծրագրերի բարելավմանը:

ՌԾ գործողությունների պլան-ժամանակացույցի իրատեսական կառուցվածքը կարևոր նախապայման է ռազմավարության իրականացման համար: Սակայն դրա ազդեցությունը լիարժեք կարող է դրսևորվել միայն այն դեպքում, երբ գործողությունները ուղեկցվում են հստակ, չափելի արդյունքներով և գնահատման տվյալահենք ցուցանիշներով: Այս ուղղությամբ ցուցիչների կատարելագործումը՝ որակական և քանակական ցուցիչների հստակ համակարգով, կստեղծի ռազմավարական մշտադիտարկման հնարավորություն և կավելացնի հաշվետվողականությունը բոլոր մակարդակներում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ հաստատությունը բժշկական կրթական ծրագրերի իրականացմամբ փորձում է պատրաստել միջին մասնագիտական կրթությամբ առողջապահական ոլորտի մրցունակ կադրեր, որոնք կրթությունն ավարտելուց հետո համալրում են աշխատաշուկան, գործատուները և մյուս շահակիցները կարևորում են քոլեջի դերն ու առաքելությունը միջին մասնագիտական կրթությամբ բուժաշխատողների պատրաստման գործում՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 1-ի պահանջները:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

«Գրիգորիս» բժշկա–հումանիտար քոլեջ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կառավարումն իրականացվում է միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքներին համապատասխան՝ տնօրենի և Ընդհանուր ժողովի կողմից: Քոլեջի տնօրենը նշանակվում է հիմնադրի կողմից և պատասխանատու է քոլեջի ընթացիկ կառավարման համար: Տնօրենի նշանակման պահանջներ և պաշտոնի նկարագիր քոլեջը չի մշակել: Ընդհանուր ժողովը կազմված է 7 անդամից, որի կազմում ընդգրկված են հիմնադիրը, վարչական, դասախոսական, ուսանողական համակազմի ներկայացուցիչներ և մեկ արտաքին շահակից: Ընդհանուր ժողովի նախագահը հաստատության բաժնետոմսերի միակ սեփականատեր հանդիսացող քոլեջի հիմնադիրն է: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Ընդհանուր ժողովում քննարկվում են քոլեջի ընթացիկ կառավարման հարցերը, ներկայացվում ստորաբաժանումների կատարողական զեկույցները: Ներքին շահակիցների վերհանած խնդիրները հիմնականում վերաբերում են ռեսուրսային համալրումների իրականացմանը, միջոցառումների կազմակերպմանը: Քոլեջի ռազմավարական երկարաժամկետ ուղղությունների վերաբերյալ առաջարկների իրականացման գործում ներքին շահակիցները դեռևս նախաձեռնողականություն չեն դրսևորում: Ի տարբերություն ներքին շահակիցների՝ Ընդհանուր ժողովում ներգրավված արտաքին շահակիցն առաջարկներ է իրականացրել ֆինանսական երկարաժամկետ պլանավորման, պահուստային ֆոնդ ստեղծելու վերաբերյալ՝ կառավարելու քոլեջի ֆինանսական ռիսկերը և ապահովելու երկարաժամկետ կայունությունը: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ քննարկումների, այլ կրթական հաստատությունների ուսումնասիրության արդյունքում քոլեջն իրականացրել է ուսման վարձերի ավելացում, սկսել է քայլեր իրականացնել շրջանավարտների բազայի ձևավորման ուղղությամբ: Այսուհանդերձ, այս աշխատանքները դեռևս ամփոփված չեն. շրջանավարտների միասնական և պարբերաբար թարմացվող բազա դեռևս առկա չէ:

Մանկավարժական և տնօրինական խորհուրդները համարվում են խորհրդակցական մարմիններ: Մանկավարժական խորհուրդը քննարկում է ուսումնական գործընթացներին առնչվող հարցերը: Խորհրդի կազմում ընդգրկված են տնօրենի տեղակալը, ամբիոնների վարիչները, կուրսղեկները, բոլոր դասախոսները, Ընդհանուր ժողովի մեկ ներկայացուցիչ և Ուսանողական խորհրդի անդամներ: Տնօրինական խորհուրդը քոլեջի Ընդհանուր ժողովի և մանկավարժական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում իրականացնում է կանոնակարգով իրեն վերապահված լիազորությունները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ տնօրինական խորհուրդն իրականացնում է քոլեջի կառավարման ուղղությունների վերաբերյալ քննարկումներ, առաջարկներն ուղղում Ընդհանուր ժողով, որտեղ կայացվում են վերջնական որոշումները՝ հատկապես ֆինանսավորման ուղղություններով: Քոլեջի ֆինանսավորման ուղղությունների վերաբերյալ վերջնական որոշումները կայացվում են հիմնադրի կողմից:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի կառավարման մարմիններում կայացված որոշումների վերաբերյալ շահակիցները տեղեկանում են քննարկումների միջոցով, ինչպես նաև կառավարման մարմինների նիստերի արձանագրությունները հասանելի են պաշտոնական կայքում:

Քոլեջի կազմակերպական կառուցվածքը վերանայվել է 2023 թվականին՝ ենթակայությունների հստակեցման, կառուցվածքում բոլոր ստորաբաժանումների ներկայացման նպատակով: ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքում հստակեցվել են ստորաբաժանումների միջև ուղղահայաց և հորիզոնական կապերը: Նախորդ և գործող կազմակերպական կառուցվածքների համադրումից պարզ դարձավ, որ ինչպես նախորդ հավատարմագրման ընթացքում կառուցվածքում առկա է արտաքին կապերի բաժինը, սակայն բաժինը դեռևս չի ձևավորվել. հասարակական հիմունքներով արտաքին կապերի հաստատման գործառույթներն իրականացնում է ՈԱ պատասխանատուն: Վերանայված կառուցվածքի համաձայն՝ միավորվել են 5 ամբիոնները՝ դառնալով 4 ամբիոն (Հանրակրթական և ընդհանուր-հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական առարկաների ամբիոնը ստեղծվել է 2 ամբիոնների միավորման միջոցով): Հաստատությունն իրականացնում է մոդուլային ուսուցում, սակայն ամբիոնները ձևավորվել են առարկայական միավորմամբ (Դեղագործական առարկաների ամբիոն և այլն): Կազմակերպական կառուցվածքում առկա են նաև լաբորատորիաներ, սակայն առանձին պատասխանատուներ չեն նշանակվել, ամբիոնների վարիչներն են իրականացնում դրանց կառավարումը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ չնայած քոլեջի գծային կառուցվածքում հստակեցվել են հորիզոնական կապերը, սակայն ստորաբաժանումների պլանների ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ստորաբաժանումների միջև հորիզոնական հաղորդակցությունը դեռևս տեսանելի չէ: Հարկ է նշել, որ ինչպես նախորդ հավատարմագրման ժամանակ, ներկայումս ևս կրթական ծրագրերի կառավարման և բարելավումների իրականացման գործընթացում ամբիոնների վարիչների դերը հստակ չէ:

Քոլեջի աշխատակիցների գործառույթներն ամրագրված են պաշտոնի նկարագրերում, սակայն դրանցում տեսանելի չեն հաշվետվողականության ձևերը և կապերը (ենթակայությունն ու հաշվետվողականության ձևը նշված են միայն ավագ լաբորանտի, լաբորատորիայի կամ կաբինետի վարիչի պաշտոնի նկարագրերում, որոնց հաստիքները համալրված չեն): Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ստորաբաժանումներն իրենց հաշվետվությունները ներկայացնում են նախ Տնօրինական խորհրդում, այնուհետև հավանության արժանանալու դեպքում ներկայացնում Ընդհանուր ժողովում: Քոլեջի տնօրենը Ընդհանուր ժողովում ներկայացնում է ՌԾ կատարողական զեկույց, որը կազմվում է ՈԱ պատասխանատուի կողմից:

Ֆինանսների բաշխումը քոլեջն իրականացնում է տարեկան պլանավորմամբ՝ ֆինանսատնտեսական նախահաշվի նախագծի հիման վրա: 2024 թվականի համար դրամական միջոցների ներհոսքի ուղղություններն են ուսանողների վարձավճարներից ստացվող եկամուտները՝ ընդհանուր միջոցների շուրջ 99.80% և այլ աղբյուրներից ստացվող միջոցները՝ 0.20%:

Անդրադառնալով քոլեջի ծախսերի բաշխման դինամիկային՝ պարզ է դառնում, որ առավելագույն մասը՝ աճի միտում պահպանելով, ուղղվում է աշխատակիցների աշխատավարձերին՝ 2022թ. կազմելով 59.50%, 2023թ.՝ 69,75% իսկ 2024թ.՝ 71.76%, ուսումնական սարքավորումների և գույքի ձեռքբերմանը՝ 2022թ. 10.40%, 2023թ. 7.50% և 2024թ.՝ 4.17%, որակի ապահովման գործընթացների ծախսերը 2022թ. կազմել են 6.39%, 2023թ. նվազել են՝ 2.32%, իսկ 2024թ. չի հատկացվել գումար: Տնտեսական ծախսերի մասով արձանագրվել է տատանում՝ 2022թ՝

8.69%, 2023թ՝ նվազում մինչև 4.64%, իսկ 2024թ՝ նորից աճ մինչև 8.69%: Նույն միտումն է նկատվում նաև հետազոտության ծախսերի ուղղությամբ՝ 2022թ՝ 3.45%, 2023թ՝ 0.77%, 2024թ՝ 2.10%: Քոլեջը գործում է վարձակալված տարածքում, որի վարձակալության վճարը 2024 թվականին կազմել է բյուջեի 4.84%-ը: Ֆինանսական հատկացումների ուղղությունները և դրանց արդյունավետությունը քոլեջի կողմից չի վերլուծվել:

Անդրադառնալով ռազմավարական նպատակների արդյունավետ իրականացման ուղղությամբ ֆինանսների հատկացմանը՝ հարկ է նշել, որ ՌԾ նպատակներին ուղղված ֆինանսական պլանավորման քաղաքականություն քոլեջը չունի: Այսուհանդերձ, ըստ անհրաժեշտության՝ հիմնադրի կողմից ֆինանսական միջոցներ են հատկացվում ռեսուրսների ընթացիկ համալրման, վերապատրաստումների իրականացման, մասնագիտական գրականության ձեռքբերման նպատակով: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ֆինանսական երկարաժամկետ զարգացման քաղաքականություն, ֆինանսական ռիսկերի կառավարման մեխանիզմներ քոլեջում դեռևս ներդրված չեն:

Քոլեջի գործունեությունն իրականացվում է երկարաժամկետ պլանավորմամբ: Քոլեջը նախորդ հավատարմագրումից հետո կազմել է նաև «Թերությունների վերացման ծրագիր»: Քոլեջն առաջնորդվում է 2024-2028թթ. համար մշակված երկարաժամկետ ՌԾ-ով, որի հիմնախնդիրները 2019-2024թթ. ՌԾ-ի հետ համադրությամբ նույնն են մնացել:

Նախորդ հավատարմագրման շրջանակում քոլեջը ստացել է խորհրդատվություն ներդնելու միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորման ու հաշվետվողականության փոխկապակցման մեխանիզմներ: Այսուհանդերձ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ստորաբաժանումների պլանները ևս կազմվում են Ռազմավարական ծրագրի ողջ ժամկետի համար՝ ըստ ռազմավարական ուղղությունների: Վերջին երեք տարիների պլանների և հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանք փոխկապակցված են՝ ներկայացնելով պլանավորման գործընթացների կատարված լինելը: Այսուհանդերձ, դրանց բովանդակությունը, ըստ տարիների, հիմնականում նույնական է, հաճախ համընկնում են նաև ըստ տարիների առանձնացված բարելավման գործընթացները:

Քոլեջի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության նպատակով հաստատությունը 2024 թ.-ին իրականացրել է 2022-2024թթ. SWOT վերլուծություն, որտեղ ըստ ՌԾ ուղղությունների ներկայացված են քոլեջի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները: 2024 թ.-ին քոլեջը մշակել է նաև 2020-2024 թթ. ռիսկերի բացահայտման և կառավարման վերաբերյալ զեկույց, որտեղ առանձնացված են արտաքին և ներքին ռիսկերը, որոնք սակայն ընդհանրական են, ինչպես օրինակ օրենսդրական փոփոխություններ, արտագաղթ, սերնդափոխության ռիսկեր և այլն: Հարկ է նշել, որ նշված ռիսկերի կառավարման մեխանիզմներ քոլեջը չի ներդրել: Հաշվի առնելով ֆինանսական ռիսկերը՝ Ընդհանուր ժողովում քննարկվել է քոլեջի պահուստային ֆոնդ ստեղծելու հնարավորությունը, ինչը նախատեսվում է ապագայում շենքային խնդիրները կարգավորելու և նոր տարածք ձեռք բերելու համար:

Անդրադառնալով որակի ապահովման և կառավարման համակարգերի համատեղ աշխատանքին՝ հարկ է նշել, որ նախորդ հավատարմագրումից հետո քոլեջը մեկնարկել է իր գործունեության տարբեր ուղղությունների վերաբերյալ տվյալների հավաքագրումը, որոնց հիման

վրա հիմնականում ռեսուրսային բարելավումներ են տեղի ունեցել: Այսուհանդերձ, հարկ է նշել, որ դեռևս տեսանելի չէ կապը հավաքագրված տվյալների և քոլեջի երկարաժամկետ զարգացմանն ուղղված որոշումների կայացման միջև. որոշումները հաճախ կայացվում են ըստ իրավիճակային անհրաժեշտության՝ օրինակ ֆինանսներ ուղղելու նոր ռեսուրս ձեռքբերելու, դասախոսական կազմի վերապատրաստման համար միջոցներ հատկացնելու համար: Տվյալների վրա հիմնված որոշումների կայացման տեսանկյունից հարկ է նշել, որ հաճախ որակի պատասխանատուն ներգրավված է բոլոր գործընթացներում, այնուհետև պատասխանատու է այդ գործընթացների արդյունավետության գնահատման համար: Այս մեխանիզմի արդյունավետությունը և շահերի բախման հնարավոր ռիսկերը հաստատության կողմից չեն դիտարկվել:

Նախորդ հավատարմագրումից հետո քոլեջում կառավարման և վարչարարության գործընթացներում ներդրվել է ՊԻԳԲ սկզբունքը, այսուհանդերձ երկու տարին բավարար ժամանակ չի եղել հաստատության համար այս ուղղությամբ ՊԻԳԲ շրջափուլի բոլոր փուլերով անցնելու համար: Շրջափուլի փակման և նոր շրջափուլի մեկնարկի դեպքեր դեռևս չկան: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կառավարման գործընթացները հիմնականում պլանավորման և իրականացման փուլերում են: Նախորդ հավատարմագրումից հետո մշակվել և լրամշակվել են մի շարք փաստաթղթեր, որոնք գործածության մեջ դրվել են 2024 թ.-ից սկսած:

Հաստատությունը շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալները հասանելի է դարձնում իր պաշտոնական կայքէջում, սակայն շրջանավարտների մասնագիտական առաջընթացի պարբերական ուսումնասիրման ու մշտադիտարկման մեխանիզմներ դեռևս ներդրված չեն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ «Գրիգորիս» բժշկա–հումանիտար քոլեջը փորձել է մշակել կառավարման և վարչարարության համար անհրաժեշտ փաստաթղթային հենքը, ինչը նպաստել է կառավարման գործընթացների կանոնակարգմանը և միանձնյա ու կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմանը որոշումների կայացման գործընթացում, սակայն նախորդ հավատարմագրման արդյունքում կատարված բարելավումները դեռևս չեն բերել հաստատության կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը: Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի հիմնադրի ջանքերը կրթության կազմակերպման և անհրաժեշտ բարելավումներն իրականացնելու համար, ինչը նպաստում է բարեփոխումների իրականացմանը: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը կարևորում է կառավարման բոլոր օղակների ակտիվ գործունեությունը կառավարման գործընթացների արդյունավետության բարձրացման և հաստատության շարունակական զարգացման համար:

Շահակիցների ներգրավման ուղղությամբ իրականացված քայլերն ունեն դրական նախադրյալներ: Սակայն դրանց ազդեցությունը կարող է մեծանալ միայն այն դեպքում, երբ քոլեջը հաստատի պարբերական և վստահելի հաղորդակցության հարթակներ՝ քննարկումների, հարցումների և մասնակցային ձևաչափերի միջոցով: Այս համատեքստում կարևոր է նաև շահակիցների կարիքների պարբերական գնահատումը և նրանց կողմից առաջարկությունների

ներկայացման մշակույթի խթանումը՝ ռազմավարական որոշումների կայացմանը մասնակից դարձնելու նպատակով:

Քոլեջում արտաքին գործընկերների ներգրավումը՝ օրինակ սոցիալական ծառայության ներկայացուցիչների մասնակցությունը ֆինանսական պլանավորման հարցերին, լավ նախադեպ է: Այս համագործակցությունն անհրաժեշտ է զարգացնել նաև կրթական բովանդակության և գործատուների կարիքների շուրջ՝ ստեղծելով պարբերական հանդիպումների, համատեղ նախագծերի և արձագանքման հարթակներ: Դա կնպաստի շրջանավարտների զբաղվածության բարձրացմանը և կրթական ծրագրերի շարունակական համապատասխանեցմանը աշխատաշուկային:

Կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման համար փորձագիտական խումբը կարևորում է հորիզոնական կապերի ամրապնդումը, ստորաբաժանումների համագործակցության ուղղությունների արտահայտումը պլաններում՝ քոլեջի գործունեությունը և մարդկային ռեսուրսների պլանավորումն ու արդյունավետության գնահատումն առավել արդյունավետ դարձնելու նպատակով: Փորձագիտական խումբը շեշտադրում է, որ կրթական ծրագրերի կառավարման, վերանայման և բարելավման գործընթացում ամբիոնների դերի հստակեցումը կնպաստի ուսումնական գործընթացի համակարգված կազմակերպմանը, ծրագրերի բովանդակության շարունակական արդիականացմանը և կրթության համապատասխանությանը աշխատաշուկայի պահանջներին:

Ընդհանուր առմամբ, բյուջեի բաշխման ներկա կառուցվածքը չի արտացոլում ռազմավարական նպատակների իրականացմանն ուղղված համալիր մոտեցում: Աշխատավարձերի ճնշող կշիռը և որակի ապահովման ու զարգացման ուղղությունների ֆինանսավորման նվազումը կարող են խոչընդոտել կազմակերպության երկարաժամկետ առաջընթացը: Անհրաժեշտ է վերանայել ֆինանսական պլանավորումը՝ ապահովելով ծախսերի հավասարակշռված բաշխում և համադրություն քոլեջի ռազմավարական առաջնահերթությունների հետ: Ֆինանսական կայունության համար քոլեջին անհրաժեշտ է մշակել ֆինանսավորման բազմազանեցման քաղաքականություն՝ նախատեսելով նոր կրթական նախաձեռնություններ, դասընթացներ, դրամաշնորհային ծրագրերի ներգրավում: Նման նախաձեռնությունները կնվազեցնեն կախվածությունն ուսանողական վարձավճարներից և կառաջացնեն ֆինանսական պահուստային ֆոնդ՝ ռազմավարական նպատակներն իրագործելու և կառավարման կայունությունն ապահովելու համար:

Քոլեջի ռազմավարական պլանի արդյունավետ իրականացումն ավելի իրատեսական կլինի, եթե այն ունենա հստակ պլաններ՝ միջնաժամկետ և կարճաժամկետ մակարդակներով: Փորձագիտական խումբը անհրաժեշտ է համարում, որ պլաններն արտացոլեն նաև գործողությունների փուլային բնույթը, ակնկալվող արդյունքները լինեն չափելի, իսկ կատարողական զեկույցները՝ վերլուծական, ինչը թույլ կտա, որ ղեկավարությունը կարողանա ավելի հստակ վերահսկել առաջընթացը, հայտնաբերել խոչընդոտները և նախատեսել դրանց հաղթահարման քայլերը:

Տվյալների հավաքագրումն անհրաժեշտ է վերածել յուրաքանչյուր մակարդակում կառավարիչների (ստորաբաժանման ղեկավար, ամբիոնի վարիչ, տնօրեն, Ընդհանուր ժողով)

որոշումների կայացման գործիքի: Քոլեջը պետք է ոչ միայն ներկայացնի թվերի փոփոխությունը, այլև պարզաբանի՝ ինչու են այդ փոփոխությունները տեղի ունեցել, ինչի հետևանք ունեն դրանք և ինչ ազդեցություն կարող են ունենալ ապագայում: Փորձագիտական խումբը գտնում է, որ տվյալների դինամիկայի վերլուծությունը (օրինակ՝ շրջանավարտների մասնագիտական աճի ցուցանիշների դինամիկա) թույլ կտա վեր հանել քոլեջի մրցակցային առավելությունները և կնպաստի դիմորդների կայուն հոսքին ու քոլեջի զարգացմանը:

Որակի պատասխանատուի ընդգրկվածությունը բոլոր գործընթացներում պետք է լրացվի շարունակական գնահատման, տվյալների հավաքագրման և վերլուծության համակարգով, որը կառանձնացնի որակի գնահատումը գործադիր կառավարման գործընթացներից: Սա կնվազեցնի շահերի բախման ռիսկերը և հնարավորություն կտա արդյունավետ իրականացնել բարելավման փուլերը:

Անդրադառնալով քոլեջի կողմից շնորհվող որակավորումների վերաբերյալ հրապարակումների իրականացմանը՝ փորձագիտական խումբը կարևորում է, որ իրազեկման միջոցներն ընդլայնվեն՝ ըստ թիրախային խմբերի՝ դիմորդներ, շրջանավարտներ, գործատուներ: Քոլեջը կարող է կառուցել բովանդակային և նպատակային հաղորդակցություն, որն ուղղված կլինի ոչ միայն իր մասին տեղեկություն տալուն, այլ նաև վստահություն ձևավորելուն՝ որպես հուսալի և առաջադեմ կրթական հաստատություն:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրման արդյունքում կատարված բարելավումները դեռևս չեն բերել հաստատության կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը, քոլեջը չի մշակել իր երկարաժամկետ զարգացմանն ուղղված բիզնես ռազմավարություն, չի ներդրել նյութական ու ֆինանսական ռեսուրսների պլանավորման ու կառավարման քաղաքականություն և մեխանիզմներ, առկա չեն երկարաժամկետ զարգացման պլանավորմանը նպաստող կարճաժամկետ պլանավորումներ, հստակ պատասխանատվությունների բաշխման արդյունավետ մեխանիզմներ, իսկ ստորաբաժանումների միջև հորիզոնական կապերը թույլ են, սահմանված ցուցիչները չեն ապահովում քոլեջի զարգացման ուղղությունների իրականացման ընթացքը, կառավարչական որոշումները ոչ միշտ են հիմնված հավաստի և պարբերաբար թարմացված տվյալների վրա, կառավարման և վարչարարության գործընթացներում ամբողջովին չի կիրառվում որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի բավարարում չափանիշ 2-ի պահանջները:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատվում է **անբավարար**:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

Քոլեջը Որակավորումների ազգային շրջանակի հինգերորդ մակարդակում իրականացնում է 4 կրթական ծրագիր՝ հիմնական և միջնակարգ կրթության հիմքով՝ «Քույրական գործ», «Մանկաբարձական գործ», «Դեղագործություն» և «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտություններով: Օտարերկրյա ուսանողների համար քոլեջը ևս կազմակերպում է կրթություն «Ատամնատեխնիկական գործ» կրթական ծրագրում (2024-2025 ուստարում՝ 2 ուսանող. ուսուցումը նույն կրթական ծրագրով ուսանողների ընտրությամբ իրականացվում է ռուսերենով): Քոլեջում 2024-2025 ուստարում կրթություն է ստանում 208 ուսանող:

Քոլեջն իր առաքելությամբ կարևորում է տեղական աշխատաշուկայի համար կադրերի պատրաստումը: Փորձագիտական այցի ընթացքում գործատուները շեշտել են, որ իրենց համար առաջնային է պրակտիկ հմտություններով համալրված շրջանավարտների պատրաստումը: Գործատուները փորձում են քոլեջում ձեռք բերված տեսական և գործնական կարողությունները վերածել կիրառական հմտությունների՝ պրակտիկայի ընթացքում զարգացնելով ուսանողների պատրաստվածությունը հետևյալ ուղղություններով՝ հիվանդի խնամք, բուժական մանիպուլյացիաներ, մանկան և բուժառուի խնամք, դեղաձևերի պատրաստում, դեղերի տրամադրում, առաջին բուժօգնության տրամադրում, ինչպես նաև անտիսեպտիկայի և ասեպտիկայի կանոնների կիրառություն:

Հիմք ընդունելով նախորդ փորձագիտական խորհրդատվությունները վերջնարդյունքների չափելի դարձնելու և հստակեցնելու ուղղությամբ՝ քոլեջը վերանայել է «Քույրական գործ» կրթական ծրագրի վերջնարդյունքները: Կրթական ծրագրերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ վերջանարդյունքները խմբավորվել են հինգ ուղղություններով, սակայն մեծ փոփոխությունների չեն ենթարկվել, որոշ դեպքերում միայն խմբավորվել են: Մյուս կրթական ծրագրերի պարագայում մեկնարկած բենչմարքինգը դեռևս ընթացքի մեջ է:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջը, հիմնվելով պետական կրթական չափորոշիչների վրա, մշակել է իր կրթական ծրագրերը՝ պահպանելով մուտքային պահանջները, մոդուլների հերթականությունը: Բացի հիմնական հանրակրթական առարկաներից և մասնագիտական մոդուլային ծրագրերից, ուսումնական պլաններում առկա են նաև ընտրովի և նախասիրական մոդուլներ, օրինակ՝ «Քույրական գործում» ընտրովի մոդուլ է «Հոգեբուժություն»-ը, իսկ նախասիրականը՝ «Ընտանեկան բուժքույրություն», «Դեղագործություն» մասնագիտությունում ընտրովի մոդուլ է «Կլինիկական պաթոլոգիա», իսկ նախասիրական՝ «Ընտանեկան կյանքի նախապատրաստում», «Տարիքային հոգեբանություն», «Մանկաբարձական գործ» մասնագիտությունում ընտրովի մոդուլ է «Ընտանիքի պլանավորում», իսկ նախասիրական՝ «Գեղագիտություն», «Մշակույթի պատմություն», «Կրոնի պատմություն», «Օտար լեզուներ» առարկաներ, որոնք ներդրվել են ընտրովի և պահուստային ժամերի հաշվին:

Ուսումնական պլաններում առկա են պրակտիկայի հետևյալ տեսակները՝ ուսումնական արտադրական, նախաավարտական։ Կրթական ծրագրերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ կրթական ծրագրերում ուսումնական պրակտիկա տեսական ուսուցմամբ և «Մանկաբարձական գործ» կրթական ծրագրում արտադրական պրակտիկա չի իրականացվում։ Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջը մշակել է պրակտիկայի ծրագրեր, սակայն առավել հաճախ պրակտիկաների գործատու ղեկավարներն իրենք են տրամադրում առանձին առաջադրանքները։ Պրակտիկայի օրագրերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանցում ուսանողները նշում են պրակտիկայի ընթացքում իրականացված գործողությունները, ներկայացնում՝ ինչ հմտություններ են ձեռք բերել պրակտիկայի ընթացքում։ Պրակտիկաների շրջանակներում ուսանողները բացի մասնագիտական կարողությունների զարգացումից ծանոթանում են նաև իրական աշխատանքային միջավայրի պահանջներին, այդ թվում՝ բուժաշխատողի նորմերի և էթիկական սկզբունքների պահպանմանը, ինչպիսիք են մասնագիտական համազգեստի կրումը, հիգիենայի և անվտանգության պահանջները և աշխատանքային ընթացակարգերը, դեոնթոլոգիայի (բուժաշխատող-բժիշկ, բուժաշխատող-բուժառու հաղորդակցություն) սկզբունքներին։

Անդրադառնալով դասավանդման մեթոդների ընտրությանը՝ հարկ է նշել, որ ըստ կրթական ծրագրերի տարանջատված դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն քոլեջը չի սահմանել։ Դասալսումներից պարզ դարձավ, որ դասախոսներն ազատ են ընտրելու մեթոդները։ Կրթական ծրագրերում յուրաքանչյուր մոդուլի համար նշված են սակավաթիվ (2-3) մեթոդներ։ Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ առավել հաճախ կիրառվող մեթոդներն են դասախոսությունները, հարցուպատասխանը, քննարկումները, իրավիճակային խնդիրների դիտարկումը։

Կիրառվող դասավանդման մեթոդների արդյունավետության գնահատման նպատակով իրականացվում են դասալսումներ, որոնց վերլուծություններում ևս մեթոդները չեն վերլուծվում։ Դասալսումների արդյունքում քոլեջը նախաձեռնել է դասախոսական կազմի վերապատրաստումներ՝ նվիրված դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառմանը։ Դասավանդման մեթոդների լավ փորձերի փոխանակման ուղղությամբ աշխատանքներ քոլեջը չի նախաձեռնել։

Անդրադառնալով ուսանողներին տրամադրվող առաջադրանքներին՝ հարկ է նշել, որ ուսանողներն իրականացնում են ինքնուրույն աշխատանքներ, ռեֆերատներ, քննարկում են իրավիճակային խնդիրներ։ Գործնական կարողությունների զարգացման և ձեռքի հմտությունների ձևավորման նպատակով ուսանողներն իրականացնում են սիմուլյացիաներ՝ կիրառելով քոլեջի մուլյաժները, ֆանտոմները, դեղագործական հավանգները, կշեռքները և այլն։

Նախորդ փորձաքննության շրջանակներում քոլեջը ստացել էր խորհրդատվություն ձևավորելու ուսանողներին տրամադրվող ուսումնառության նյութերի և առաջադրանքների միասնական շտեմարան, որը թույլ կտար ապահովել դասավանդման և ուսումնառության գործընթացների իրականացումը՝ անկախ դասախոսների փոփոխությունից։ Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ առաջադրանքների միասնական բազա քոլեջը չի ձևավորել՝ ըստ մոդուլների և ուսումնական տարիների։

Դասալսումներից, ավարտական ամփոփիչ քննությունների մասնակցությունից և մասնագիտական գրականության ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ հաճախ ուսանողներին տրվող գրականությունը նախատեսված է բժշկական բարձրագույն ուսումնական հաստատությունների համար: Ուսանողներին տրվող ուսումնառության առանձին փաթեթներ բոլոր կրթական ծրագրերի համար մշակված չեն, յուրաքանչյուր դասախոս, ըստ անհրաժեշտության, ուսանողներին տրամադրում է նյութեր կամ գրականության հղումներ, ձեռնարկներ:

Ուսանողներին տրվող հետազոտական բնույթի առաջադրանքներն ամբողջովին արտացոլված չեն կրթական ծրագրերում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մոդուլների շրջանակներում դասախոսները հանձնարարում են իրականացնել ուսումնասիրություններ, ինքնուրույն աշխատանքներ հիվանդությունների, ախտորոշման, կանխարգելման, առաջին բուժօգնության ցուցադրման ձևերի մասին: Այսուհանդերձ, ինքնուրույն աշխատանքների և ռեֆերատների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանցում հաճախ բացակայում են մասնագիտական բժշկական գրականության հղումները, ցանկերը, եզրահանգումները:

Ուսանողներն իրականացնում են նաև ավարտական աշխատանքներ, ինչը ներկայումս պարտադիր բնույթ չի կրում: Հետազոտական աշխատանքների համար սահմանված են կատարման պահանջներ, որոնք առավելապես տեխնիկական բնույթ ունեն: Հետազոտական աշխատանքների իրականացման համար ուսանողներին տրվում է 3 միավոր: Ավարտական երկու քննությունների հանձնումը պարտադիր է ուսանողների համար, ավարտական հետազոտական աշխատանքի իրականացումը դիտարկվում է որպես լրացուցիչ աշխատանք: Փորձագիտական քննարկումներից պարզ դարձավ, որ քոլեջը նախատեսում է ավարտական աշխատանքների իրականացումը դարձնել կրթական ծրագրերի համար պարտադիր մաս:

Մասնագիտական միջավայրում կիրառվող թվային գործիքներին (օրինակ՝ «Ատամնատեխնիկական գործ» կրթական ծրագրի շրջանակներում՝ 3D մոդելավորման Cad/Cam ծրագիր) ծանոթանալու հնարավորություններ դեռևս առկա չեն: Դեղագործություն կրթական ծրագրի պարագայում դեղատներում կիրառվող վաճառքի ծրագրերին ուսանողները ծանոթանում են պրակտիկաների շրջանակներում: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ նաև, որ արհեստական բանականության կիրառմամբ բժշկական դեպքերի ուսումնասիրման օրինակները դեռևս տարածված չեն քոլեջում՝ որպես առաջադրանքների մշակման, հնարավոր այլ դեպքերի ուսումնասիրման հնարավորություն ուսումնառության գործընթացում:

Նախորդ հավատարմագրման շրջանակում քոլեջը ստացել է խորհրդատվություն ներդնելու ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման չափանիշներ՝ սահմանելով հստակ բաղադրիչներ: 2024 թվականին քոլեջը մշակել է «Ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և բողոքարկման կանոնակարգ»-ը: Կանոնակարգով սահմանել են գիտելիքների գնահատման ձևերը (ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ), միավորային սանդղակը, քննությունների անցկացման կարգը, վերահանձնման ձևերը, բողոքարկման հնարավորությունները: Գնահատման սանդղակի բաղադրիչներն են՝ հաճախումներ (2 միավոր), գիտելիքների յուրացման կարողությունների և հմտությունների ձեռքբերում (5 միավոր), ինքնուրույն անհատական աշխատանք (3 միավոր): Սահմանվել է

անհարգելի բացակայությունների առավելագույն շեմ՝ 144 ժամ: Գնահատման հստակ չափանիշներ առանձնացված չեն: Մասնագիտական քննարկումներից պարզ դարձավ, որ դասախոսները ներկայացնում են ուսանողներին իրենց մոդուլի շրջանակներում գնահատման պահանջները, որոնցում կատարման չափանիշներ առանձնացված չեն:

Դասալսումների և փորձագիտական հանդիպումների ընթացքում արձանագրվել է, որ դասախոսներն ուսանողներին տրամադրում են անհրաժեշտ հետադարձ կապ՝ պատասխանում են հարցերին, բացատրում խնդիրները: Սակայն մասնագիտական քննարկումների արդյունքում պարզ է դարձել, որ ուսանողների մոտ մասնագիտական գործողությունների հաջորդականության վերաբերյալ պատկերացումները միշտ չէ, որ ամբողջական են: Նրանք ծանոթ են գործողությունների առանձին քայլերին, սակայն հաճախ չեն տիրապետում մասնագիտական միջավայրում կիրառվող գործողությունների տրամաբանական և փուլային հաջորդականությանը: Օրինակ, «Քույրական գործ» կրթական ծրագրի ուսանողները ներերակային ներարկման ժամանակ հաճախ խախտում են լարանի արձակման և դեղի ներմուծման հաջորդականությունը, իսկ «Դեղագործություն» ծրագրում ուսանողները հաճախ չեն կարողանում ամբողջականությամբ ներկայացնել դեղի պատրաստման փուլերի ճշգրիտ ընթացակարգը: Այս դիտարկումները վկայում են, որ գործընթացների փուլային վերլուծության և ալգորիթմային մտածողության զարգացումն ուսումնական գործընթացում դեռևս ամբողջական չէ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ արդյունքների գնահատման միջոցներ (օրինակ՝ գնահատման թերթիկներ) մշակված չեն:

Պրակտիկաների գնահատումն իրականացվում է պրակտիկայի գործատու ղեկավարի կողմից: Պրակտիկան վերահսկում են քոլեջի պրակտիկայի ղեկավարը և գործատու կազմակերպության նշանակված ղեկավարը: Այնուհետև, քոլեջի կողմից նշանակված պրակտիկայի ղեկավարը ևս գնահատում է, որից հետո ուսանողը ստանում է միջինացված գնահատական:

Բոլոր կրթական ծրագրերում ուսանողները հանձնում են պետական ամփոփիչ քննություններ, քննական հարցաշարերում առկա են տեսական հարցեր, իսկ գործնական բաղադրիչի ստուգման նպատակով առկա են իրավիճակային խնդիրներ, դեղատոմսերի օրինակներ: Քոլեջը 2024թ.-ին մշակել և հաստատել է «Շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կազմակերպման և անցկացման կարգ», ըստ որի՝ պետական ատեստավորումն իրականացվում է գործնական ունակությունների ստուգմամբ և առարկայական բանավոր քննությամբ: Բացի այդ յուրաքանչյուր մասնագիտության ուսումնական պլանում ամրագրված է ուսումնառության ամփոփիչ ատեստավորման 2 համալիր պետական քննություն՝ ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական մոդուլներից: Հարցատոմսերի դիտարկումից պարզ դարձավ, որ պետական ատեստավորման քննությունը միայն հատուկ մասնագիտական մոդուլներից է, այսպես օրինակ՝ «Դեղագործություն» կրթական ծրագրի պարագայում ատեստավորման մեկ քննությունը «Դեղագործության կազմակերպում և էկոնոմիկա» և «Մասնավոր դեղաբանություն» մոդուլներից է, իսկ մյուսը՝ «Դեղաձևերի տեխնոլոգիա» և «Ֆարմակոգնոզիա» մոդուլներից: Փորձագիտական այցի ընթացքում պետական ատեստավորման քննության դիտարկումից և տոմսերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ամփոփիչ

ատեստավորման քննություններից մեկում ստուգվող բոլոր հարցերը տեսական բնույթ ունեն: Մյուս կրթական ծրագրերի շրջանակներում 4-րդ հարցով նախատեսված է նաև գործնական կարողությունների ստուգում՝ իրավիճակային խնդրի իրականացմամբ՝ ցույց տալու ձեռքի հմտությունները՝ կիրառելով բժշկական գործիքները, ներկայացնելով պատրաստված պրոթեզները և այլն:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջում ուսանողների ընթացիկ և ամփոփիչ գնահատման գործընթացներում ներառվել է գործնական բաղադրիչի ստուգումը սիմուլյացիաների և վերլուծական աշխատանքների միջոցով, սակայն դեռևս չեն ներդրվել այնպիսի գնահատման մեթոդներ (օրինակ checklist-եր), որոնք հատուկ են բժշկական կրթության ոլորտում՝ նպատակ ունենալով ամբողջական կերպով գնահատել ուսանողի գիտելիքները և հմտությունները:

Քոլեջը 2024 թ.-ին նոր խմբագրությամբ հաստատել է «Բենչմարքինգի իրականացման քաղաքականությունը և ընթացակարգը»: Կրթական ծրագրերի համեմատական վերլուծության շրջանակներում քոլեջը կնքել է պայմանագրեր և հուշագրեր տեղական և միջազգային քոլեջների հետ: Տեղական համագործակից քոլեջների թվում են «Երևանի հենակետային բժշկական քոլեջը», «Վարդենիսի բժշկահումանիտար քոլեջը», «Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջը», իսկ միջազգային՝ Ռուսաստանի Դաշնության «Մոսկվայի պետական բժշկական քոլեջը», Բելոռուսի Հանրապետության «Գրոդնոյի պետական բժշկական քոլեջը», Վրաստանի Հանրապետության «Պանացեա բժշկական քոլեջը»: Համագործակցության շրջանակում բենչմարքինգը մեկնարկել է բոլոր մասնագիտություններում: «Քույրական գործ», «Մանկաբարձական գործ» կրթական ծրագրում ուսումնասիրվել են ուսումնական պլանները, դիտարկել են պրակտիկաների տեսակները և տևողությունը: Հիմք ընդունելով նախորդ փորձագիտական խորհրդատվությունները՝ կրթական ծրագրերի բենչմարքինգի իրականացման և վերջնարդյունքների հստակեցման ուղղությամբ՝ բենչմարքինգի հիմնական ուղղվածություն է ընտրվել ուսումնական պլանների բարելավումը, ՄԿԾ-ներում սահմանված վերջնարդյունքների վերանայումը, հետագա ուսումնառություն և մասնագիտական գործունեության շրջանակի համեմատությունը, որոնց արդյունքում քոլեջը մասամբ փոփոխությունների է ենթարկել իր կրթական ծրագրերը: Դիտարկելով ուսանողների շարժունության հնարավորությունները և ժամաքանակների համընկնումների անհրաժեշտությունը՝ «Քույրական գործ» կրթական ծրագրի ուսումնական պլանում ուսանողների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով «Ընդհանուր վիրաբուժություն» և «Մասնավոր վիրաբուժություն» մոդուլների բաշխվածությունը կատարվել է 2 կիսամյակներում՝ բժշկական քոլեջների հետ համատեղ ՄԿՈՒԶԱԿ դիմում ներկայացնելով և մոդուլային ծրագրերում համապատասխան փոփոխություններն անելով: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ «Մանկաբարձական գործ» կրթական ծրագրում ևս տեղի է ունեցել ժամաքանակի փոփոխություն «Պացիենտի կրթում» մոդուլային ծրագրում դիտարկելով ժամաքանակի քիչ լինելը ուսումնառության արդյունքների ձեռքբերման համար՝ 18 ժամը դարձնելով 30:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ փոփոխված ուսումնական պլաններով կրթական գործընթացի կազմակերպումը կմեկնարկի 2025-2026 ուստարվանից:

Անդրադառնալով կրթական ծրագրերի մշտադիտարկմանը՝ հարկ է նշել, որ կրթական ծրագրերի մշտադիտարկման համար քոլեջում իրականացվում են դասալսումներ, վերլուծվում են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասալսումների արդյունքում դասախոսների հետ քննարկումները վերաբերել են հիմնականում ուսանողների ակտիվության ապահովմանը դասապրոցեսի ընթացքում: Ամփոփիչ ատեստավորման հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ 2023-2024 ուստարվա ամփոփիչ ատեստավորմանն առաջարկ է եղել «Դեղագործություն» կրթական ծրագրի ամփոփիչ քննությանը ուսանողների կողմից ներկայացնելու դեղատնային դեղաձևի պատրաստումը: «Ատամնատեխնիկական գործ» կրթական ծրագրում հանձնաժողովի կողմից առաջարկ է եղել տեսահոլովակների միջոցով ցույց տալու իրականացված գործնական աշխատանքներն ըստ հաջորդական փուլերի: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քննության ընթացքում չեն ներկայացվում տեսահոլովակները, սակայն ուսանողները ներկայացնում են նախաավարտական փուլում կատարած իրենց աշխատանքները, մեկնաբանում դրանց պատրաստման ընթացքը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը մասնագիտության կրթական ծրագրերը մշակել է ՈՒՇ հինգերորդ մակարդակի պահանջներին և աշխատաշուկայի առանձնահատկություններին համապատասխան, ինչը նպաստում է քոլեջն ավարտելուց հետո ուսանողների մասնագիտական գործունեության իրականացմանը: Դրական է, որ քոլեջը ձևավորել է կրթական ծրագրերի բենչմարքինգի մշակույթ, որը հիմք է դարձել ուսումնական պլաններում ժամաքանակների վերանայման և մոդուլների բաշխման ճշգրտման համար:

Քոլեջում առկա են լավ նախադրյալներ գործնական ուսուցման կազմակերպման համար՝ լաբորատոր ռեսուրսներ, մուլյաժներ, սիմուլյացիոն միջավայր: Սակայն կարևոր է, որ քոլեջն ապահովի պրակտիկաների նպատակային իրականացում, ըստ նախապես սահմանված հմտությունների և բազմապրոֆիլ իրավիճակների՝ ոչ թե տվյալ պացիենտի խնդրով կամ իրավիճակով պայմանավորված: Դա թույլ կտա ապահովել մասնագիտական հմտությունների լայն շրջանակի զարգացում և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ու որոշում կայացնելու կարողություն:

Տեսական ուսուցմամբ պրակտիկան հնարավոր է կազմակերպել նաև քոլեջի ներսում՝ կիրառելով սիմուլյացիոն տեխնոլոգիաներ, իրական դեպքերի քննարկում և տվյալների վերլուծություն: Փորձագիտական խումբը գտնում է, որ ուսանողների մասնակցության ակտիվացումը հիվանդության դեպքերի քննարկմանը, տվյալների ուսումնասիրմանը կնպաստի վերլուծական կարողությունների զարգացմանը:

Քոլեջը անհրաժեշտություն ունի ձևավորելու կրթական ծրագրերի իրականացման ամբողջական ուսումնական փաթեթներ, որոնք կներառեն մոդուլային ծրագրերի մանրամասն նկարագրությունները, օրացուցային թեմատիկ պլանները, ուսումնառության պլանները, ուսանողներին տրամադրվող առաջադրանքներն ու ուսումնառության նյութերը: Սա կապահովի

դասավանդման համակարգվածությունն ու ուսումնական գործընթացի ամբողջականությունը՝ նպաստելով ուսանողների կարողությունների փուլային աստիճանական զարգացմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառումը և դրական է գնահատում դասախոսների շրջանում իրականացված վերապատրաստումները: Սակայն արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է ներդնել մեթոդների ընտրության միասնական մոտեցում, ինչպես նաև ձևավորել ներքին լավ փորձի վերհանման և տարածման մեխանիզմներ, ինչը կնպաստի ինտերակտիվ դասավանդման մեթոդների ընտրությամբ աշխատաշուկայի պահանջներին ծանոթ շրջանավարտների թողարկմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը քայլեր է ձեռնարկել գնահատման մեթոդների բազմազանեցման ուղղությամբ, ինչը նպաստել է ուսանողների գործնական կարողությունների և ձեռքի հմտությունների գնահատմանը: Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը ներդնի նաև բժշկական կրթությանը հատուկ գնահատման մեթոդներ և առաջադրանքների կատարման չափանիշներ, ինչը կնպաստի ուսանողների ձեռք բերած հմտությունների և կարողությունների ամբողջական գնահատմանը և անհատական հետադարձ կապի տրամադրմանը:

Կարևոր է, որ յուրաքանչյուր ուսումնառության արդյունքի համար քոլեջը սահմանի համապատասխան գնահատման միջոց՝ ապահովելու մեկ արդյունքից մյուս արդյունքին համակարգված անցում և յուրաքանչյուր վերջնարդյունքի ստուգում:

Փորձագիտական խումբը շեշտադրում է նաև հետազոտական առաջադրանքների համար բովադակային պահանջների սահմանումը, եզրահանգումների և տվյալների հետ աշխատանքների հմտությունների ձևավորումը, ինչը կնպաստի վերլուծական մտածողությամբ մասնագետների պատրաստմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ նախորդ հավատարմագրումից հետո երկու տարվա ընթացքում քոլեջը համակարգված քայլեր է իրականացրել կրթական ծրագրերի բենչմարքինգի և մշտադիտարկման ուղղությամբ, ինչը նպաստել է կրթական ծրագրերում ժամաքանակների, ուսումնական պլանների բարելավմանը: Այսուհանդերձ, վերջնարդյունքներն առավել չափելի դարձնելու, աշխատաշուկայի պահանջներին բավարարող շրջանավարտներ պատրաստելու համար քոլեջը պետք է մշտադիտարկման և բարելավման գործընթացը կապի շրջանավարտների կարիքների և գործատուների ակնկալիքների վերլուծության հետ՝ ապահովելով կրթական ծրագրերի շարունակական համապատասխանեցումը աշխատաշուկայի պահանջներին:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրումից հետո քոլեջը մեկնարկել է կրթական ծրագրերի բարելավման գործընթացը ուսումնական պլանների և վերջնարդյունքների վերանայման միջոցով այլ կրթական ծրագրերի հետ համահունչության, շարժունության ապահովման նպատակով, պրակտիկ ոլորտից ներգրավված դասախոսների և ռեսուրսային համալրումների միջոցով ձևավորում է ուսանողների գործնական հմտություններն

ու կարողությունները, սիմուլյացիաների, բուժառուների դեպքերի վերլուծության միջոցով փորձում է գնահատել ուսանողների գործնական կարողությունները, դասախոսական կազմը տրամադրում է անհրաժեշտ հետադարձ կապ ուսանողների ընթացիկ հմտությունների ձևավորման նպատակով, պրակտիկաների շնորհիվ ուսանողները ծանոթանում են իրական աշխատանքային միջավայրի պահանջներին, բուժառուների և այլ բուժաշխատողների հետ հաղորդակցման սկզբունքներին, առկա են կրթական ծրագրերի մշտադիտարկման և բարելավման որոշ մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 3-ի պահանջները:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

Քոլեջն ուսանողների հավաքագրման գործընթացն իրականացնում է՝ ըստ «Ուսանողների հավաքագրման (մասնագիտական կողմնորոշման) քաղաքականության և ընթացակարգի»: Քոլեջի կողմից կազմակերպվում են այցելություններ Երևանի և հարակից մարզերի դպրոցներ, աշակերտներին ներկայացնում քոլեջի մասնագիտությունների և հնարավորությունների մասին, տրամադրում տեղեկատվական բուկլետներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների հավաքագրման աշխատանքներում ներգրավված են դասախոսական կազմը, պրակտիկայի և կարիերայի բաժնի պատասխանատուն և ուսանողները: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ նաև, որ պրակտիկայի և կարիերայի բաժնի պատասխանատուի ու Կրթական տեղեկատվական ազգային կենտրոնի (այսուհետ՝ ԿՏԱԿ) համագործակցության միջոցով քոլեջը մասնակցում է կրթական ցուցահանդեսների, ինչպես նաև հեռուստատեսության միջոցով հանրությանը տեղեկացնում քոլեջի մասին: Ուսանողների հավաքագրման նպատակով կիրառվում են նաև քոլեջի ֆեյսբուքյան, ինստագրամյան էջերը և պաշտոնական կայքը:

Օտարերկրյա դիմորդների հավաքագրման նպատակով քոլեջը համագործակցում է «Քեմփս Ինտերնեյշնլ» և «Ֆյուչր Պրո» ՍՊԸ-երի հետ, որոնք տրամադրում են դիմորդներին տեղեկատվություն Հնդկաստանում, Բահրեյնում, Ինդոնեզիայում, Շրի Լանկայում, աֆրիկական երկրներում և այլն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դիմորդները քոլեջի մասին առավելապես տեղեկանում են ծանոթներից, պաշտոնական կայքից, սոցիալական հարթակներից: Ներկայումս քոլեջում սովորում է նաև 2 օտարերկրյա ուսանող՝ Եգիպտոսի Արաբական Հանրապետությունից, որոնք տեղեկացել են քոլեջի մասին կայքի միջոցով:

Քոլեջն իրականացնում է նաև նախապատրաստական դասընթաց «Քույրական գործ» մասնագիտությամբ, որին 2024 թվականին մասնակցել է 11 սովորող Հնդկաստանից և Շրի Լանկայից: Քոլեջն ունեցել է նաև դիմորդներ Գանայի Հանրապետությունից, որոնք ՀՀ չեն կարողացել ժամանել մուտքի վիզայի արտոնագիր չստանալու հանգամանքով պայմանավորված: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը նախատեսում է շարունակել օտարերկրյա դիմորդների շրջանում հավաքագրման գործընթացները:

Քոլեջում ընդունելությունն իրականացվում է ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի համաձայն: Դիմորդները հանձնում են մասնագիտական քննություն «Կենսաբանություն» առարկայից:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին տարիներին դիմորդների թվի դինամիկ աճ է նկատվում հատկապես «Քույրական գործ» և «Մանկաբարձական գործ» մասնագիտությունների գծով, որը, ըստ քոլեջի ներկայացուցիչների, պայմանավորված է նախորդ ինստիտուցիոնալ հավատարմագրումից հետո իրականացված ռեսուրսային բարելավումներով, կայքի համալրմամբ: Մյուս մասնագիտությունների գծով ուսանողների քանակը կայուն է՝ քիչ տատանումներով: Ըստ քոլեջի ինքնավերլուծության՝ քոլեջում հիմնական և միջնակարգ կրթության հիմքով սովորում է 208 ուսանող: Ուսանողների թվի դինամիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ 2022-2023 ուսումնական տարվա 135 ուսանողից մինչև 2024-2025 ուսումնական տարի քոլեջի ուսանողների թիվը դարձել է 208՝ աճելով 54.07%-ով:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ 2023-2024 ուստարում քոլեջից հեռացվել է ուսանողների 3.8%-ը, վերականգնվել՝ 24.6%-ը: Վերջին 3 տարիների վերլուծությունների արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողների հեռացումների հիմնական պատճառներ են հանդիսացել վարձավճարները չվճարելը, բացակայությունները և արտագաղթը: Անհարգելի բացակայությունների պատճառով հեռացումների քանակը նվազեցնելու համար կուրսղեկները քննարկումներ են ունենում ուսանողների հետ, ինչպես նաև գնահատման համակարգում ավելացվել է բաղադրիչ՝ 2 միավոր տրամադրելով ներկայությունը խրախուսելու և առաջընթացին հետևելու համար:

Քոլեջն ուսանողների կրթական կարիքների գնահատումն իրականացնում է հիմնականում հարցումների, խորհրդատուների հետ քննարկումների և ՈՒԽ-ի միջոցով: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ իրականացված քննարկումների արդյունքում տեղի են ունեցել ռեսուրսային համալրումներ: 2025թ.-ին Ընդհանուր ժողովի նիստերից մեկի ընթացքում ՈՒԽ-ն հարց է բարձրացրել օտար լեզուների վիկտորինա կազմակերպելու համար քոլեջի բյուջեից ֆինանսական միջոցներ հատկացնելու վերաբերյալ: Արդյունքում ՈՒԽ-ին տրամադրվել են ֆինանսական միջոցներ, կազմակերպվել է վիկտորինան, պարգևատրվել են ուսանողներ:

Նախորդ փորձագիտական խորհրդատվությունների հիման վրա քոլեջում ուսանողների կարիքների վերհանման գործընթացում ակտիվ գործունեություն է ծավալում նաև ՈւԽ-ն՝ պարբերաբար ուսանողներին իրազեկելով իր գործունեության մասին: ՈւԽ-ն առաջնորդվում է քոլեջի կողմից հաստատված կանոնակարգով, ունի 15 անդամ և իր աշխատանքները

կազմակերպում է ՈւԽ Կառավարման աշխատանքների և Ուսումնական աշխատանքների գծով հանձնաժողովների միջոցով: Նախորդ հավատարմագրումից հետո քոլեջում Ուսանողական խորհուրդն իր կողմից նախատեսվող միջոցառումներն ամրագրում է տարեկան աշխատանքային պլաններում՝ նշելով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետները և պատասխանատուներին: Պլանների ու հաշվետվությունների ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ վերջին 3 տարիներին ՈւԽ-ն կազմակերպել է մի շարք միջոցառումներ, օրինակ վիկտորինաներ, տոնական օրերին նվիրված միջոցառումներ և այլն: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ՈւԽ-ն կազմակերպում է նիստեր, որոնց ժամանակ քննարկվում են ուսանողների իրավունքների և պարտականությունների իրազեկման հարցերը, պլանավորվում և քննարկվում են նախատեսվող միջոցառումները և այլն: Նիստերն արձանագրվում են ՈՒԽ նախագահի տեղակալի և օգնականի կողմից:

Նախորդ փորձագիտական խորհրդատվությունները հաշվի առնելով՝ քոլեջը քայլեր է իրականացրել ուսանողներին խորհրդատվությունների տրամադրման ուղղությամբ: Ընթացիկ խորհրդատվությունները նախատեսված են ուսումնական պլաններում: Քոլեջն իրականացնում է նախաքննական խորհրդատվություններ՝ ըստ հստակ ժամանակացույցի: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսները պատրաստակամ են պատասխանելու ուսանողների հարցերին դասպրոցեսից հետո բաց թողնված դասընթացները կամ թեմաները լրացնելու համար՝ տրամադրելով հանձնարարականներ (ռեֆերատներ, ինքնուրույն աշխատանքներ): Ըստ ՈԱ պատասխանատուի կողմից իրականացված հարցումների՝ ուսանողները կարևորում են խորհրդատվական պարապմունքների իրականացումը, նրանց 58.6%-ն ընդգրկված է այս պարապմունքներում, իսկ 89.5%-ը բավարարված է դրանցից:

Նախորդ հավատարմագրման խորհրդատվությունները հաշվի առնելով՝ քոլեջը սկսել է իրականացնել լրացուցիչ պարապմունքներ օտար լեզուների կարողությունների զարգացման ուղղությամբ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսները ևս պատրաստակամ են աջակցելու ուսանողներին լեզվահիմացության մակարդակը բարձրացնելու նպատակով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ ուսանողներն ազատ են դիմելու վարչական անձնակազմին իրենց հուզող հարցերով, որի համար առանձին ժամանակացույց նախատեսված չէ՝ պայմանավորված ուսանողների թվաքանակի քիչ լինելով: Ուսանողներն ընթացիկ կազմակերպչական խնդիրներով, դասացուցակին վերաբերող հարցերով հիմնականում դիմում են կուրսի ավագներին կամ կուրսղեկներին: Քոլեջը հարցումների միջոցով գնահատել է նաև վարչական անձնակազմից ուսանողների բավարարվածությունը, ըստ որի՝ ուսանողների 82%-ը տեղեկացված է իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին, իսկ 67%-ը բավարարված է այդ ծառայություններից:

Ուսանողների և շրջանավարտների կարիերային նպաստելու նպատակով քոլեջն ունի պրակտիկայի և կարիերայի պատասխանատու: Պատասխանատուն իրականացնում է մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումներ, ուսումնական մասի հետ համատեղ համակարգում և իրականցնում է դիմորդների հավաքագրման ուղղությամբ աշխատանքները, կապ հաստատում շրջանավարտների հետ և այլն:

Քոլեջը կնքել է համաձայնագրեր 21 հաստատությունների հետ: Համագործակցության շրջանակում բուժհաստատություններում կազմակերպվում են ուսանողների պրակտիկաները, ինչպես նաև կազմակերպությունները տեղեկացնում են իրենց թափուր աշխատատեղերի վերաբերյալ: Թափուր աշխատատեղերի վերաբերյալ՝ այդ թվում նաև քոլեջում առկա թափուր հաստիքների վերաբերյալ, շրջանավարտներն իրազեկվում են նաև Որակի ապահովման պատասխանատուի կողմից: Բուժհաստատություններում առկա թափուր աշխատատեղերի վերաբերյալ քոլեջին տեղեկացնում է նաև Միասնական սոցիալական ծառայության ներկայացուցիչը, որն ընդգրկված է Ընդհանուր ժողովում: Ուսանողների կարիերային ուղղված միջոցառումներն ամփոփվում են հաշվետվությամբ, որտեղ ներկայացվում են պրակտիկայի վայրերը, պրակտիկանտների քանակը, համագործակցության նպատակով կնքված նոր պայմանագրերը և գործընկերները, ցուցահանդեսների, էքսպոների և այլ միջոցառումների մասնակցած ուսանողների քանակը և վերջին տարիներին ուսանողների զբաղվածության տվյալները:

Նախորդ հավատարմագրման շրջանակում քոլեջը ստացել է խորհրդատվություն՝ մշակելու շրջանավարտների մշտապես թարմացվող տվյալների բազա՝ ներդնելով նրանց հետ հետադարձ կապի ապահովման արդյունավետ գործիքներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, քոլեջը մեկնարկել է շրջանավարտների տվյալների բազայի ստեղծման աշխատանքները՝ ըստ տարիների հավաքագրելով տեղեկատվությունը: Շրջանավարտների հետ կապը կարիերայի պատասխանատուն պահում է սոցիալական հարթակներում ձևավորված խմբերի միջոցով: Քոլեջն ունի վերջին 4 տարիների շրջանավարտների տվյալները՝ ավարտելուց անմիջապես հետո դրանք հավաքագրելու միջոցով: Շրջանավարտների հետագծի վերաբերյալ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ըստ 2023-2024թթ. տվյալների՝ 73 շրջանավարտներից 3-ը շարունակում են ուսումը բուհերում՝ բժշկական ուղղվածության մասնագիտությամբ, 59-ը աշխատում են, որից 48-ը՝ իրենց մասնագիտությամբ, 11-ը՝ ոչ իրենց մասնագիտությամբ, իսկ գործազուրկ շրջանավարտների թիվը 11 է: Գործատուների հետ քննարկումներից պարզ դարձավ, որ շրջանավարտները պահանջարկ ունեն շուկայում: Փորձագիտական քննարկումներից պարզ դարձավ, որ շրջանավարտների 55-60%-ն ավարտելուց գրեթե երեք ամիս անց գտնում են աշխատանք: Այսուհանդերձ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ շրջանավարտների մասնագիտական առաջընթացին հետևելու և տվյալները պարբերաբար թարմացնելու գործիքներ դեռևս ներդրված չեն: Շրջանավարտների զբաղվածության տվյալները չեն դրվում կրթական ծրագրերի բարելավումների հիմքում և չեն հանդիսանում հիմք ամբիոնների պլանների կազմման համար:

Անդրադառնալով ուսանողների հետազոտական կարողությունների զարգացմանը՝ հարկ է նշել, որ ուսանողներին հանձնարարվում են ռեֆերատներ, ավարտական աշխատանքներ, օրինակ՝ «Մարդու կենսագործունեության փուլերը», «Ներարկումներ», «Բակտերիաներ» և այլ թեմաներով: Նախորդ հավատարմագրումից հետո քոլեջը փորձել է ուսանողներին ներգրավել հետազոտական աշխատանքներում՝ խթանելով նրանց մասնակցությունն ուսումնագիտական կոնֆերանսներին: 2025 թվականին Բելոռուսի Հանրապետության «Գրոդնոյի պետական բժշկական քոլեջի» հետ համագործակցության շրջանակում քոլեջի 3 ուսանողներ մասնակցել և

զեկուցում են ունեցել միջազգային ուսանողական ուսումնագործնական կոնֆերանսին և ստացել դիպլոմներ։ Ուսանողների զեկուցումները վերաբերել են արհեստական բանականության գործածությանը քույրական գործում, պիելոնեֆրիտի ազդեցությանը հղիության ընթացքում, բժշկական էթիկային և նորարարություններին։ Նշված ուսանողները, ըստ ուսանողների խրախուսման կարգի, քոլեջի կողմից արժանացել են դրամական խրախուսման։

Քոլեջը սահմանել է հետազոտական աշխատանքների կատարման պահանջներ։ Փորձագիտական ուսումնասիրություններից և մասնագիտական քննարկումներից պարզ դարձավ, որ դասավանդվող մոդուլներում ուսանողներին համակարգված կերպով չեն ուսուցանվում մասնագիտական գրականության ուսումնասիրության և հավաստի աղբյուրների տարբերակման մեթոդները, ինչպես նաև արհեստական բանականության կիրառման, տվյալների բազաների հետ աշխատանքի և վերլուծության գործիքները։ Քոլեջի կրթական ծրագրերում ամբողջովին արտացոլված չեն նաև հետազոտական մտածողությունը խթանող բոլոր առաջադրանքները։

Քոլեջում գործող կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունները գնահատվում են ՈՒ հարցումների և քննարկումների միջոցով։ Վերլուծությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսանողների կողմից վերհանված խնդիրները հիմնականում վերաբերում են քոլեջում տեխնիկական միջոցների համալրմանը, դասավանդման մեթոդների արդիականացմանը և այլն։ Քննարկումների արդյունքում նախորդ հավատարմագրումից հետո ձեռք են բերվել նոր ռեսուրսներ, բարելավվել են ենթակառուցվածքները։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջն ունի ուսանողների հավաքագրման և ընդունելության կանոնակարգված գործընթացներ։ Օտարերկրյա ուսանողներ ներգրավելու ուղղությամբ քոլեջն արդեն ստեղծել է որոշակի համագործակցություններ, ինչը կարող է մեծացնել դիմորդների թիվը և նպաստել միջմշակութային միջավայրի ձևավորմանը։ Այս արդյունքն ամրապնդելու համար պետք է շարունակել և զարգացնել օտարերկրյա ուսանողների ներգրավման աշխատանքները՝ ապահովելով նրանց կրթական միջավայրում լիարժեք ինտեգրումը, այդ թվում՝ լեզվական աջակցության, խորհրդատվության և մշակութային ներառման ապահովումը։ Անհրաժեշտ է նաև ներդնել ուսանողների խնդիրները նախապես բացահայտելու և լուծումներ առաջարկելու համակարգ՝ օրինակ՝ անհատական աշխատանք, սոցիալական աջակցություն, ֆինանսական խնդրին ուղղված ժամանակին արձագանք, ինչը ևս կարող է նվազեցնել հեռացումների տոկոսը։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում կիրառվում են ուսանողների կարիքների գնահատման մեխանիզմներ, Ուսանողական խորհուրդն ակտիվորեն ներգրավված է գործընթացներին, ինչը նպաստում է ուսանողների կարծիքի լսելիությանը և որոշումների վրա ազդեցություն ունենալուն։

Խորհրդատվական պարապմունքները և լրացուցիչ դասընթացներն ուսանողների զարգացման կարևոր բաղադրիչ են։ Փորձագիտական խումբը գտնում է, որ անհրաժեշտ է

շարունակաբար գնահատել դրանց անցկացման արդյունավետությունը, ըստ կրթական ծրագրերի առանձնահատկությունների, ուսանողների մասնագիտական և փոխանցելի հմտությունների զարգացման անհրաժեշտության՝ իրականացնել դրանց պլանավորումը և իրականացումը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ նախորդ հավատարմագրումից հետո քոլեջը նախաձեռնել է շրջանավարտների տվյալների հավաքագրում, սակայն այս աշխատանքը կծառայի որպես իրական զարգացման գործիք, երբ քոլեջը պարբերաբար հետևի շրջանավարտների մասնագիտական առաջընթացին (նույն շրջանավարտի մասնագիտական աճը վեց ամիս անց, մեկ տարի անց և այլն) և կրթության շարունակականությանը: Նման տվյալների մշտական թարմացումը թույլ կտա ոչ միայն գնահատել կրթական ծրագրերի գործնական արդյունքը, այլ նաև դրանց հիման վրա վերանայել ուսումնական բովանդակությունն ու մոտեցումները՝ համապատասխանեցնելով աշխատաշուկայի պահանջներին:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև, որ քոլեջը պարբերաբար կազմակերպի ուսանողների մասնագիտական կողմնորոշման, փափուկ հմտությունների զարգացման միջոցառումներ, որոնք կօգնեն ուսանողներին կողմնորոշվել իրենց մասնագիտական աշխատանքի ուղղությունների ընտրության, կրթության շարունակականության հարցերում, ինչպես նաև պատրաստ լինել աշխատանքի անցնելու՝ ունենալով համապատասխան մասնագիտական և հաղորդակցական հմտություններ:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը խրախուսում է ուսանողներին իրականացնել վերլուծական և հետազոտական աշխատանքներ, սակայն ուսանողները հաճախ չունեն բավարար գործիքներ՝ գրական հավաստի աղբյուրներ ընտրելու, տեղեկատվությունը վերլուծելու կամ հետազոտություն իրականացնելու համար: Մոդուլային ծրագրերում նման հմտությունների զարգացմանն ուղղված առաջադրանքների տրամադրումը, ժամանակակից գործիքների՝ արհեստական բանականության, տվյալների վերլուծության համակարգերի կիրառումը կնպաստեն վերլուծող և նորարարական մտածողությամբ մրցունակ կադրերի պատրաստմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում գործում են ուսանողների հավաքագրման և ընդունելության հստակ մեխանիզմներ, կրթական միջավայրի գնահատման հիման վրա իրականացվում են խորհրդատվական հանդիպումներ և օտար լեզվի կարողությունների զարգացման դասընթացներ, Ուսանողական խորհուրդն ակտիվորեն մասնակցում է միջոցառումների կազմակերպմանն ու ուսանողների կարիքների ներկայացման գործընթացին, վարչական անձնակազմը ցուցաբերում է աջակցություն ուսանողներին, իսկ ուսանողական ծառայությունների որակի ապահովման և գնահատման համար ներդրված են համապատասխան մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 4-ի պահանջներին:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

Ըստ ՄՈՒՀ-ի 2024-2028թթ. ՌԶԾ-ի՝ Քոլեջն իր առջև նպատակադրել է ապահովել որակյալ կադրային ներուժ: Նշված նպատակի իրագործման համար ՌԶԾ-ում սահմանվել են ԳԱՑ-եր և հետևյալ քայլերը՝ մշակել և ընդունել դասախոսների ընտրության ու ընդունելության կարգ, ուշադրություն դարձնել հետազոտական աշխատանք կատարող անձանց և լրամշակել խրախուսման նոր մեթոդներ, ստեղծել դասախոսների վերապատրաստման և մասնագիտական գիտելիքների կատարելագործման մեխանիզմներ՝ օգտագործելով իր ֆինանսական միջոցները և ապահովել երիտասարդ կադրերի հոսքը քոլեջ՝ ուշադրություն դարձնելով օտար լեզուների իմացությանը: Դասախոսական կազմի ընտրությունն իրականացվում է՝ հիմք ընդունելով Պետական կրթական չափորոշիչների պահանջները, ինչպես նաև քոլեջի պաշտոնի նկարագրերը: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ դասախոսական կազմին ներկայացվող պահանջներն են դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն կրթության առկայությունը կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձը: Ուսանողների գործնական կարողությունների զարգացման նպատակով քոլեջը կարևորում է նաև պրակտիկ փորձառության առկայությունը, օտար լեզուների իմացությունը, համապատասխան թվային ծրագրերի կիրառումը: Ըստ կրթական ծրագրերի՝ դասախոսներին ներկայացվող պահանջների տարբերակում առկա չէ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թափուր հաստիքների համալրման համար հայտարարվում և իրականացվում են մրցույթներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հիմնականում մրցույթներին դիմում է մեկ թեկնածու, որը պահանջներին բավարարելու դեպքում համալրում է քոլեջի դասախոսական կազմը:

Ներկայումս քոլեջում դասավանդում է 34 դասախոս, որոնցից 27-ը հիմնական, 7-ը՝ համատեղությամբ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ պրակտիկ փորձառություն ունեցող (ապագա բուժքրոջը դասավանդում է գործող փորձառու բուժքույր) դասավանդողների թիվը 18 է: Քոլեջի շրջանավարտներից մեկը ևս դասավանդում է քոլեջում: 32-ն ունեն բարձրագույն կրթություն, 2-ը՝ միջին մասնագիտական: Դասախոսական կազմի ընտրության ու համալրման գործընթացի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դասախոսների մասնագիտական որակավորումները համապատասխանում են դասավանդվող առարկաներին և մոդուլներին: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ յուրաքանչյուր դասախոս դասավանդում է առավելագույնը 9 մոդուլ:

Դասախոսական կազմի գնահատման նպատակով քոլեջում հաստատվել է «Դասալսումների անցկացման և գնահատման կանոնակարգ», համաձայն որի քոլեջն իրականացնում է պլանային և ոչ պլանային դասալսումներ: Դասալսումներում ընդգրկվում են վարչական աշխատակիցները, ամբիոնի վարիչները, դասախոսները և ուսանողները: Քոլեջի պլան-ժամանակացույցի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր դասախոսի մոտ իրականացվում է առնվազն մեկ դասալսում:

Դասալսման թերթիկների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանցում շեշտադրված խնդիրներն են պասիվ ուսանողների ներգրավման անհրաժեշտությունը, ինտերակտիվ մեթոդների պակասը: Որպես առավելություն շեշտադրվում է գործնական հմտությունների բարձր մակարդակը, նյութերի մատչելիությունն ու հասանելիությունը:

Դասախոսական կազմի գնահատման նպատակով կիրառվում են նաև ուսանողների շրջանում իրականացվող հարցումները: Հարցումների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանց շնորհիվ դիտարկում են մեթոդների կիրառությունը, օբյեկտիվ գնահատելու կարողությունը:

Իրականացված գնահատումների և դասախոսական կազմի պահանջների հիման վրա քոլեջը նախաձեռնել է դասախոսների մասնագիտական զարգացմանն ուղղված միջոցառումներ: Այսպես նախորդ հավատարմագրումից հետո 2023-2025թթ.-ին քոլեջի նախաձեռնությամբ Բելոռուսի Հանրապետության «Գրոդնոյի պետական բժշկական քոլեջի» և Բելգիայի Թագավորության դասավանդողների որակավորման բարձրացման կենտրոնի կողմից կազմակերպվել են վեբինարներ՝ նվիրված դասավանդման ժամանակակից մեթոդներին միջին մասնագիտական կրթական ծրագրերում: 2024 թ.-ին հոգեբանամանկավարժական մոտեցումները բժշկական հաստատությունների դասավանդողների համար խորագրով վերապատրաստումներ են իրականացվել քոլեջի դասախոսների համար: Դասախոսները պարբերաբար մասնակցում են նաև ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից կազմակերպվող մեթոդական վերապատրաստումներին: Քոլեջի բյուջեի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ առանձին ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում դասախոսների վերապատրաստումների համար, սակայն ըստ անհրաժշետության և դասախոսների առաջարկների հատկացվում են ֆինանսներ տեղական և միջազգային վերապատրաստումների ու վեբինարների մասնակցության համար:

2023-2025թթ. ընթացքում վերապատրաստման ծրագրերի են մասնակցել քոլեջի 13 դասախոսներ: Բժշկական մասնագիտությունների գծով մասնագիտական մոդուլներ դասավանդող դասախոսների մասնագիտական որակավորման բարձրացումը կատարվում է ՀՀ Առողջապահության նախարարության կողմից իրականացվող վերապատրաստումների միջոցով (Շարունակական մասնագիտական զարգացման միջոցառումներ, այսուհետ՝ ՇՄԶ):

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը դեռևս չի գնահատել իրականացված վերապատրաստումների արդյունավետությունը կրթական ծրագրերի իրականացման և դասավանդման արդյունավետության բարձրացման վրա:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջում ներքին լավ փորձի տարածման և փորձի փոխանակման համակարգված միջոցառումներ չեն իրականացվում:

Վերջին երկու տարիներին դասախոսական կազմի շարժի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դասախոսական կազմը համալրվել է շուրջ 10 դասախոսներով: Նախորդ հավատարմագրման շրջանակում քոլեջը ստացել է խորհրդատվություն ներդնելու սկսնակ դասավանդողների ուղղորդման, լավագույն փորձի տարածման գործիքակազմ: Քոլեջը մշակել է սկսնակ դասավանդողների ուղղորդման ընթացակարգ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ըստ անհրաժեշտության դասախոսներին աջակցում և մեթոդական խորհրդատվություն են ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը և ուսումնական մասը, այլ միջոցառումներ և զարգացման ծրագրեր մշակված չեն:

Անդրադառնալով դասախոսական կազմի կայունությանը՝ հարկ է նշել, որ դասախոսական կազմը երիտասարդացման միտում ունի: Ներկայումս քոլեջում դասավանդողների միջին տարիքը 44 է: Նախորդ հավատարմագրումից հետո կայունության ապահովման նպատակով քոլեջում ներդրվել է դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի և խրախուսման կարգ: Կարգում սահմանված են գնահատման չափանիշներ, որոնցից են որակավորման բարձրացման և վերապատրաստման դասընթացներին մասնակցությունը, ուսումնամեթոդական և հետազոտական աշխատանքներում ներգրավվածությունը, առարկայական/մոդուլային ծրագրերի մշակումը, ներքոլեջային հասարակական կյանքին մասնակցությունը, ուսանողների հարցումների միջոցով բարձր գնահատական ստանալը, դասալսումների արդյունքները և այլն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսները տեղյակ են կարգի առկայության մասին, սակայն իրականացված խրախուսումները ոչ միշտ են հիմնվում կարգով սահմանված չափանիշների վրա: 2024-2025 ուստարում դասախոսական կազմի ներկայացուցիչները պարբերաբար արժանացել են ֆինանսական խրախուսման, պատվոգրերի և հուշանվերների՝ տոների, մասնագիտական զարգացման միջոցառումների, ինքնավերլուծության աշխատանքների մասնակցության, հետազոտական աշխատանքների, բարեխիղճ աշխատանքների իրականացման համար: 2024-2025 ուստարում քոլեջի կողմից տրամադրվել է ընդհանուր առմամբ 161 խրախուսում:

Դասախոսական կազմի կայունության ապահովման ևս մեկ մեխանիզմ է քոլեջի կողմից ձևավորված թեկնածուների բազան, որտեղ ներառվում են քոլեջին ինքնակենսագրական ուղարկած դասախոսները, մրցույթին մասնակցած, բայց չհաղթահարած թեկնածուները: Ներկայումս բազայում ներգրավված է 12 մասնագետ, որից 7-ը՝ բժշկական ուղղությամբ, 5-ը՝ հանրակրթական, հասարակագիտական ուղղություններով:

Նախորդ հավատարմագրումից հետո դասախոսական կազմի մեկ ներկայացուցիչ ունեցել է պաշտոնային աճ՝ դառնալով ամբիոնի վարիչ:

2024-2025 ուստարում քոլեջում աշխատում են 8 վարչական, 1 ուսումնաօժանդակ (համակարգչային օպերատոր) աշխատակիցներ: Քոլեջի հաստիքային վարչական 4 աշխատակիցներ իրենց վարչական գործառույթների իրականացմանը զուգընթաց ներգրավված են նաև դասավանդման գործընթացներում: Ուսումնաօժանդակ և վարչական կազմերի ներկայացուցիչների գործառույթները սահմանվում են պայմանագրերով և պաշտոնների նկարագրերով:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը դասախոսական կազմի ընտրության շրջանակում կարևորում է պրակտիկ փորձառությամբ մասնագետների ներգրավումը, ինչը նպաստում է ուսանողների մոտ կիրառական հմտությունների ձևավորմանը և իրական աշխատանքային միջավայրին առավել համապատասխանեցված կարողությունների զարգացմանը: Միաժամանակ, կարևոր է դասախոսների ընտրության չափանիշների հստակեցումը՝ հաշվի առնելով կրթական ծրագրերի առանձնահատկությունները: Հստակ չափանիշների առկայությունը թույլ կտա յուրաքանչյուր ծրագրի համար ներգրավել համապատասխան մասնագիտական ու մեթոդական կարողություններ ունեցող մասնագետների, ինչը կբարձրացնի կրթական ծրագրերի արդյունավետությունը:

Դասախոսական կազմի զարգացման համար կարևորվում է, որ դասալսումների արդյունքների վերլուծության հիմքով ձևավորվեն դասավանդման ներքին լավ փորձի տարածման մեխանիզմներ, օրինակ՝ մեթոդական հանդիպումներ, փորձի փոխանակման սեմինարներ: Այս մեխանիզմների ներդրումը կնպաստի դասավանդման մշակույթի զարգացմանը և մասնագիտական աջակցության միջավայրի ձևավորմանը, որը դրականորեն կանդրադառնա թե՛ դասախոսների մոտիվացիայի, թե՛ ուսանողների արդյունքների վրա:

Դրական է, որ քոլեջը կազմակերպում է վերապատրաստումներ՝ ներառյալ միջազգային գործընկերների ներգրավմամբ, իսկ վերապատրաստումների արդյունավետության գնահատման մեխանիզմի ներդրումը թույլ կտա չափել դրանց իրական ազդեցությունը դասավանդման մեթոդների բարելավման և ուսանողակենտրոնության բարձրացման վրա: Սա կնպաստի ծրագրերի բարելավման և կառավարման որոշումների հիմնավորված կայացմանը:

Սկսնակ դասախոսների աջակցման համար մշակված ընթացակարգի ներդրումը դրական հանգամանք է: Այնուամենայնիվ, այս գործընթացը պետք է հստակեցվի և ուղեկցվի մենթորության ձևաչափով, շարունակական հետադարձ կապի հնարավորություններով, ինչը կնպաստի ավելի արագ մասնագիտական ինտեգրմանը, դասախոսական կազմի առաջընթացին և զարգացմանը:

Դրական է նաև, որ քոլեջը ներդրել է դասախոսների խրախուսման կարգ: Խրախուսման չափանիշների ավելի հստակ կիրառումը կնպաստի դասախոսների մոտիվացիայի բարձրացմանը, և մասնագիտական աճի խթանմանը:

Թեկնածուների բազայի ձևավորումը ևս կարևոր քայլ է: Այն հնարավորություն է տալիս արդյունավետ արձագանքել աշխատաշուկայի փոփոխություններին և կանխել անձնակազմի համալրման հնարավոր ձգձգումները, ինչը դրականորեն է անդրադառնում կրթական գործընթացի անխափան կազմակերպման վրա:

Վարչական և ուսումնաօժանդակ աշխատակիցների ներգրավումը կրթական գործընթացում նպաստում է ռեսուրսների բազմակողմանի օգտագործմանը: Սակայն անհրաժեշտ է հստակեցնել նրանց գործառույթները՝ բացառելու ծանրաբեռնվածության անհամաչափ բաշխումը և ապահովելու յուրաքանչյուր աշխատակցի մասնագիտական ներուժի առավել

արդյունավետ օգտագործումը, ինչը կնպաստի կառավարման արդյունավետության բարձրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն իր կրթական ծրագրերի իրականացման համար ապահովված է համապատասխան մասնագիտական որակավորում և պրակտիկ փորձառություն ունեցող դասախոսներով, առկա են դասախոսների կարիքների գնահատման մեխանիզմներ, դասախոսների մասնագիտական առաջընթացի և որակավորման բարձրացման նպատակով իրականացվում են վերապատրաստումներ և մեթոդական սեմինարներ, քոլեջը պարբերաբար խրախուսում է դասախոսներին մասնագիտական միջոցառումների մասնակցության և ակտիվության համար, առկա են դասախոսական կազմի երիտասարդացման միտումներ և կայունության ապահովման մեխանիզմներ, կրթական ծրագրերի իրականացման համար վարչական և ուսումնաօժանդակ բավարար կազմ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 5-ի պահանջները:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2024-2028թթ. զարգացման Ռազմավարական ծրագրում խնդիր է դրված նպաստել քոլեջի հետազոտական գործունեության արդյունավետության բարձրացմանը: Խնդրի իրագործման գործողություններն են. հստակեցնել հետազոտական ու վերլուծական աշխատանքների կատարման նպատակները և գնահատման պահանջները, ուսանողներին ընդգրկել ամբիոնների հետազոտական աշխատանքներում, կատարել համատեղ հետազոտական աշխատանքներ տեղական և արտասահմանյան գիտական կենտրոնների հետ, նախաձեռնել ուսանողական գիտաժողովներ և սեմինարներ: Առաջադրված խնդիրների լուծման համար սահմանված են առաջընթացի գնահատման ցուցիչներ, ինչպիսիք են՝ վերանայված և գործող հետազոտական աշխատանքների ընթացակարգ, հաստատված ամբիոնական գիտական թեմաներ, համատեղ հավանական հետազոտական թեմաներ, ժամանակացույց, միջոցառումների կազմակերպման օրացուցային պլան: Հարկ է նշել, որ նախորդ Ռազմավարական ծրագրում նույնպես ընդգրկված էին այս նպատակներն ու խնդիրները, իսկ նոր Ռազմավարական ծրագրում քոլեջը հատկապես շեշտադրել է ուսանողների ներգրավվածության ավելացումը հետազոտական աշխատանքներում: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջը մշակել է հետազոտական թեմաների ցանկ ուսանողների

հետազոտական աշխատանքների իրականացման նպատակով, իսկ մյուս խնդիրների ուղղությամբ գործողությունների պլան դեռևս առկա չէ։

2023թ. քոլեջում ներդրվել է «Մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման կարգը», որտեղ սահմանված են հետազոտական աշխատանքների մեթոդական ցուցումներ, ռեֆերատների և ավարտական աշխատանքների ներկայացման-հանձնման կարգը։ Նախորդ հավատարմագրումից հետո քոլեջը չի հստակեցրել հետազոտական ուղղությունները բժշկական կրթության ուղղությամբ կրթական ծրագրերում՝ Որակավորումների ազգային շրջանակի 5-րդ մակարդակին համապատասխան։ Մասնագիտական քննարկումներից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի տարբեր կրթական ծրագրերում ուսանողներին տրվում են ինքնուրույն աշխատանքներ, ռեֆերատներ, ինչպես օրինակ՝ «Դեղագործություն» կրթական ծրագրի շրջանակներում ուսանողը կատարել է ինքնուրույն աշխատանք սիրտ-անոթային համակարգի վերաբերյալ, «Քույրական գործ» կրթական ծրագրի շրջանակներում՝ «Մարդու կենսագործունեության փուլերը» թեմայով ռեֆերատ և այլն։ Ինքնուրույն աշխատանքների դիտարկումից պարզ դարձավ, որ բոլոր աշխատաքներում պահպանված չեն սահմանված կարգի պահանջները, առկա չեն ներածություն, հղումներ, գրականության ցանկ, եզրակացություն։ Նյութերի բովանդակությունը վերցված է ոչ հավաստի ակադեմիական աղբյուրներից, ինչպես օրինակ Wikipedia և այլն, վերլուծված չէ տեղեկատվությունը։ Հարկ է նշել, որ առաջադրանքներն ամբողջովին արտացոլված չեն կրթական ծրագրերում. ուսանողներին տրվում են՝ ըստ դասախոսի պլանավորման։

Ուսանողները, ըստ իրենց ցանկության, ամփոփիչ ատեստավորման քննությանը զուգահեռ կարող են իրականացնել նաև ավարտական աշխատանքներ։ Այսպես օրինակ՝ «Ատամնատեխնիկական գործ» կրթական ծրագրի շրջանակներում ուսանողն ավարտական աշխատանք է իրականացրել ատամնատեխնիկական և ստոմատոլոգիական պլաստմասսաների, մետաղակերամիկական պսակների վերաբերյալ և այլն։ Ավարտական աշխատանքների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք հիմնականում հենված են քոլեջում առկա ձեռնարկների տեղեկատվության ներկայացման վրա։ Փորձագիտական խումբն արձանագրել է, որ ուսանողների կողմից կատարվող աշխատանքներում եզրահանգումները հիմնականում փաստարկային մակարդակում են և չեն ներառում վերլուծական մեկնաբանություններ կամ պատճառահետևանքային դատողություններ։ Օրինակ՝ «Ատամների առողջությունն էական նշանակություն ունի մարդու օրգանիզմի համար, ատամի արհեստական պսակի կիրառման անհրաժեշտությունը, առավելությունները հիվանդի որակյալ կյանքի բաղկացուցիչ մասն են կազմում» ձևակերպումը ներկայացնում է ընդհանուր դրույթներ՝ առանց տվյալ հիվանդության կոնկրետ դեպքի վերլուծության կամ բուժման ընտրության հիմնավորման։

«Մանկաբարձական գործ» մասնագիտությունում իրականացված ավարտական աշխատանքներն առավել վերլուծական են, հիմնված են մասնագիտական գրականության աղբյուրների վրա, պարունակում են մասնագիտական գրականության հղումներ, ներկայացնում են հիվանդությունների բուժման, կանխարգելման մոտեցումների վերլուծությունը։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ միջամբիոնային հետազոտական աշխատանքներ չեն իրականացվում։

Նախորդ հավատարմագրումից հետո քոլեջը քայլեր է ձեռնարկել ուսանողներին ներգրավելու հետազոտական կոնֆերանսներում: Այսպես, 2025 թվականին Գրոդնոյում քոլեջի երեք ուսանողներ մասնակցել և ելույթ են ունեցել Բելոռուսի գիտության օրերին նվիրված միջազգային ուսումնագործնական կոնֆերանսին: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջի դասախոսները ևս իրենց գիտական-հետազոտական ուղղվածության շրջանակում մասնակցում են գիտական կոնֆերանսներին: 2024-2025թթ. 4 դասախոս հրատարակել են գիտական հոդվածներ, թեզիսներ: Այսուհանդերձ, հարկ է նշել, որ կոնֆերանսների ուղղությունները և դասախոսների կողմից մշակված հոդվածների թեմաներն առավելապես նեղ գիտական ուղղվածություն ունեն և չեն դառնում ուսումնառության նյութ ուսանողների համար:

Նախորդ հավատարմագրումից հետո քոլեջի դասախոսներից մեկը կազմել է Քույրական գործի հիմունքներին նվիրված ձեռնարկ, որը կիրառվում է ուսումնառության գործընթացում:

Ուսանողներին ինքնուրույն/ հետազոտական աշխատանքներում ներգրավելու համար քոլեջը գնահատման համակարգում հատկացրել է 3 միավոր, սակայն դրա արդյունքում հետազոտական աշխատանքների բովանդակային բարելավում չի արձանագրվել: Ուսումնասիրության, նորարարության առկայության նվազագույն պահանջներ հետազոտական աշխատանքների կատարման համար չեն սահմանվել:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջը խրախուսում է շահակիցների ներգրավվածությունը կոնֆերանսներին: 2024թ. Բելոռուսում ուսանողական ուսումնագործնական կոնֆերանսում ելույթ ունենալու և հետազոտական աշխատանք ներկայացնելու համար «Քույրական գործ» մասնագիտության երեք ուսանողներին քոլեջը դրամական խրախուսում է հատկացրել: Ֆինանսական խրախուսում են ստանում նաև դասախոսները ձեռնարկ մշակելու, կոնֆերանսներին մասնակցելու համար: Քոլեջը դեռ չի սահմանել այնպիսի խրախուսման չափանիշներ, որոնք կդիտարկեն հետազոտական աշխատանքների փոխկապակցվածությունը ուսումնառության գործընթացի հետ: Արդյունքում, խրախուսման են արժանանում բոլոր հետազոտական նախաձեռնությունները:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ նախորդ հավատարմագրումից հետո քոլեջը փորձել է ուսանողներին տրվող առաջադրանքներում ներդնել հետազոտական բաղադրիչը, ինքնուրույն աշխատանքների, ռեֆերատների և ավարտական աշխատանքների միջոցով փորձում է խթանել վերլուծական մտածողությունը, ինչը կարևոր նախապայման է բժշկական ոլորտի մասնագետների պատրաստման համար: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը կարևորում է, որ վերլուծական առաջադրանքները տրամադրվեն պարզից բարդ հստակ պլանավորմամբ և կապակցվեն կրթական ծրագրերի վերջնարդյունքներին: Նպատակայնորեն ձևակերպված և մասնագիտական խնդիրների լուծմանը միտված առաջադրանքների կիրառումը կնպաստի ուսանողների քննադատական մտածողության զարգացմանը, ուսումնական գործընթացի կիրառական ու նորարարական բնույթի ամրապնդմանը:

Հետազոտական մտածողության կայուն զարգացման համար անհրաժեշտ է կրթական ծրագրերում ընդգրկել այնպիսի առաջադրանքներ, որոնք կզարգացնեն տեղեկատվության վերլուծության, աղբյուրների ընտրության, ինչպես նաև բժշկական տվյալների հետ աշխատելու հմտություններ։

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջում գործող հետազոտական գործունեության խրախուսման համակարգը միտված լինի ոչ թե միայն հրապարակումների քանակի ավելացմանը, այլ կրթական գործընթացին և գիտելիքի ստեղծմանը նպաստող արդյունքների գնահատմանը։ Այդ նպատակով անհրաժեշտ է սահմանել հստակ չափորոշիչներ՝ ներառյալ տվյալների վերլուծության խորությունը, օգտագործված գրականության ակադեմիական արժանահավատությունը, թեմայի համապատասխանությունը կրթական ծրագրի նպատակներին և եզրակացությունների հիմնավորվածությունը։ Այս չափորոշիչները կծառայեն որպես հստակ ուղեցույց՝ որոշելու, թե որ աշխատանքներն են արժանի խրախուսման։ Նման մոտեցումը կնպաստի բարձրորակ հետազոտական արդյունքների ստեղծմանը, ուսումնական գործընթացի հետ դրանց կապի ամրապնդմանը և ուսանողների վերլուծական մտածողության զարգացմանը։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջի որոշ դասախոսներ ներգրավված են գիտական գործունեության մեջ և ունեն հետազոտական գործունեություն իրականացնելու ներուժ։ Փորձագիտական խումբը կարևորում է այդ ներուժի ուղղորդումն ուսանողների համար հետազոտական բնույթի առաջադրանքների, ուսումնառության նյութերի մշակման, համատեղ հետազոտությունների իրականացման ուղղությամբ՝ ապահովելու քոլեջի ռազմավարությամբ կարևորված հետազոտական նպատակների իրագործումը։

Հետազոտական գործունեության շարունակական բարելավման համար անհրաժեշտ է սահմանել հստակ գնահատման ցուցիչներ և վերանայել դասավանդման և ուսումնառության ծրագրերը՝ հաշվի առնելով Որակավորումների ազգային շրջանակի 5-րդ մակարդակով սահմանված պահանջները։ Փորձագիտական խումբը գտնում է, որ հետազոտական նպատակների հստակեցումը, դրանց փոխկապակցումն ուսումնառության վերջնարդյունքներին կնպաստեն կրթական այնպիսի միջավայրի ձևավորմանը, որտեղ կպատրաստվեն վերլուծական միտք ունեցող և մասնագիտական խնդիրներին նորարարական լուծումներ առաջարկող բժշկական ոլորտի մասնագետներ։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրումից հետո ուսանողներին տրվող հետազոտական աշխատանքների նպատակները չեն հստակեցվել, չեն արտացոլվել համակարգային կերպով կրթական ծրագրերում, չեն անդրադառնում մասնագիտական համատեքստի վերլուծությանը և վերլուծական կարողությունների ձևավորմանը, իսկ դասախոսների կողմից իրականացված հետազոտությունները չեն կապակցվում կրթական գործընթացին՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի բավարարում չափանիշ 6-ի պահանջները։

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատվում է **անբավարար**:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2024-2028թթ. ՌԾ-ի խնդիրներից է համալրել և արդիականացնել նյութատեխնիկական ռեսուրսները: Քոլեջը մասնագիտությունների կրթական ծրագրերն իրականացնում է վարձակալական հիմունքներով 465,99մ² ընդհանուր մակերես զբաղեցնող մասնաշենքում, որը տեղակայված է Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը փնտրում է այլ տարածք ռեսուրսները բարելավելու և ենթակառուցվածքներն ընդլայնելու նպատակով: Քոլեջում գործում է 2 լաբորատորիա, արդիականացված համակարգչային 1 լսարան, 2 մասնագիտական կաբինետ: Քոլեջն ունի 12 լսարան: Համակարգչային լսարանն ունի 10 համակարգիչ, որոնք պարունակում են հանրակրթական բլոկի համար անհրաժեշտ ծրագրերը: Քոլեջն ունի 4 պրոյեկտոր, մասնագիտական մոդուլների դասավանդման համար ձեռք է բերել ինտերակտիվ գրատախտակ, որը 2025-2026 ուստարում նախատեսում է համալրել համապատասխան մասնագիտական էլեկտրոնային ծրագրերով:

Քոլեջի գրադարանն ունի շուրջ 1196 միավոր գրականություն, այդ թվում՝ 322 դասագիրք, 592 նեղ մասնագիտական և 70 ոչ մասնագիտական ձեռնարկներ, 212 գեղարվեստական գրականություն: Օտարալեզու գրականությունը կազում է 415 միավոր: Նախորդ հավատարմագրումից հետո ձեռք են բերվել դասագրքեր, մասնագիտական ձեռնարկներ: Հիմք ընդունելով նախորդ հավատարմագրման խորհրդատվությունը էլեկտրոնային գրադարանի ստեղծման, գրականության թվայնացման ուղղությամբ՝ 2024 թվականից սկսած քոլեջը համագործակցում է «Հայաստանի թվային գրադարանների ասոցիացիա» ՀԿ-ի հետ, ինչպես նաև քոլեջի պաշտոնական կայքում տեղադրված են մասնագիտական ձեռնարկներ, ուսուցման էլեկտրոնային նյութեր: Տարածքային սղությամբ պայմանավորված դեռ առանձին ընթերցասրահ առկա չէ:

Նախորդ հավատարմագրումից հետո քոլեջը քայլեր է իրականացրել գործող բոլոր կրթական ծրագրերի ուղղությամբ ռեսուրսներ ձեռքբերելու ուղղությամբ: Մասնավորապես, հաստատության կողմից «Դեղագործություն» կրթական ծրագրի համար ձեռք են բերվել կշեռքներ, հավանգներ, էլեկտրական չորացուցիչ, քարշիչ պահարան և այլն:

«Ատամնատեխնիկական գործ» կրթական ծրագրի համար ձեռք է բերվել պոլիմերիզացիայի կաթսա, ցենտրիֆուգ, բոր մեքենա, շլիֆմոտոր, էլեկտրական շպատելներ, սպիրտայրոցներ և այլն:

«Մանկաբարձական գործ» կրթական ծրագրի համար ձեռք են բերվել անատոմիական մուլյաժներ, գինեկոլոգիական գույք և գործիքներ, մանեկեններ, կարդիոտոպոգրաֆ, նորածնի վերակենդանացման մուլյաժ և այլն։

«Քույրական գործ» կրթական ծրագրի համար ձեռք են բերվել մուլյաժներ, մանեկեններ, բժշկական բիքսեր[5]։ Ռեսուրսների դիտարկումից և փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ քոլեջը պարբերաբար թարմացնում է անհրաժեշտ նյութերը՝ ձեռք բերելով ձեռնոցներ, ներարկիչներ, լարաններ, քիմիական նյութեր և այլն։

Քոլեջը համատեղ օգտագործում է Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջի մարզադահլիճը։

Քոլեջի եկամուտների և ծախսերի վերլուծության համաձայն՝ 2024թ. կտրվածքով ուսանողների վարձավճարները կազմում են բյուջեի մուտքերի 99,80%-ը։ Մյուս մուտքերը ձևավորվում են դիմորդների կողմից տրվող ընդունելության վճարից։

Հաստատության ֆինանսական տվյալների ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ ընդհանուր ծախսերի 71,76%-ը բաժին է ընկել աշխատավարձային ֆոնդին։ 2024թ. բյուջեի 4,17%-ը հատկացվել է ուսումնական սարքավորումների և գույքի ձեռքբերմանը, 2,10%-ը՝ հետազոտության, 8,69%-ը՝ տնտեսական, 1,53%-ը՝ գրադարանային, 1,60%-ը՝ ուսման վարձերի զեղչերի, 2,37%-ը՝ պրակտիկաների կազմակերպման, 0,39%-ը՝ գործուղման, 4,84%-ը՝ վարձակալության համար, 2,55%-ը՝ այլ ծախսերին։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ֆինանսական կատարողականի համաձայն՝ դասախոսների մասնագիտական զարգացմանը ֆինանս չի հատկացրել, իսկ վերապատրաստման միջոցառումներն իրականացվել են հիմնադրի միջոցներով։ Նույն կերպ, հավելյալ ֆինանսական միջոցներ են տրամադրվել ռեսուրսների համալրման ու արդիականացման նպատակով։

Հաստատության ֆինանսական միջոցների դինամիկայի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ նախորդ հավատարմագրումից հետո ուսանողների թվի աճով պայմանավորված՝ հաստատության ֆինանսական մուտքերն աճել են հետևյալ կերպ՝ 2024 թվականին՝ 2023 թվականի համեմատ՝ 30% աճ, 2025 թվականին՝ 2024 թվականի համեմատ՝ 32% աճ։

Հաստատությունը ֆինանսավորման այլընտանքային աղբյուրներ է համարում վճարովի նախապատրաստական դասընթացներն օտարերկրյա ուսանողների համար։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներկայումս դասընթացներում ընդգրկված ուսանողներ չկան՝ պայմանավորված ՀՀ ժամանելու հետ կապված թույլտվության խնդիրներով։ Ֆինանսավորման այլ աղբյուրներ առկա չեն։

Քոլեջը, հաշվարկելով մեկ ուսանողի համար նվազագույն ծախսերը, քննարկելով Ընդհանուր ժողովում և դիտարկելով այլ քոլեջների վարձավճարները, ուսման վարձավճարն ավելացրել է 30.000-40.000 ՀՀ դրամով։

Քոլեջն արտաքին շահակիցների հետ հաղորդակցումն ապահովում է իր պաշտոնական info@grigoris.am էլեկտրոնային փոստի միջոցով։ Հաստատության ներսում հաղորդակցությունն

[5] Մետաղական կամ պլաստիկ տարա, որն օգտագործվում է վիրակապեր, թանզիֆներ, գործիքներ կամ այլ ստերիլ նյութեր պահելու և տեղափոխելու համար։ Այն հաճախ կիրառվում է վիրահատարաններում, բուժկետերում, մանիպուլյացիոն սենյակներում։

իրականացվում է թղթային տարբերակով կամ էլեկտրոնային ներքին ցանցի միջոցով:

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջն ունի կենտրոնական ջեռուցման համակարգ, հակահրդեհային համակարգ, կրակմարիչներ, առկա են տարհանման պլաններ: Լաբորատորիաներում փակցված են անվտանգության կանոնները, առկա է քարշիչ պահարան, սակայն քիմիայի լաբորատորիայում քիմիական ռեակտիվների պահարանը օդափոխության առանձին համակարգով կահավորված չէ: Քոլեջն ունի բուժկետ: Բուժքույրը աշխատում է հասարակական հիմունքներով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը չունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողներ: Բացակայում են թեքահարթակները:

Քոլեջն իրականացրել է ռեսուրսներից բավարարվածության հարցումներ դասախոսների և ուսանողների շրջանում, որոնց արդյունքներով ուսանողներն ու դասախոսներն ընդհանուր առմամբ գոհ են քոլեջի ջեռուցման համակարգից (91%), համացանցի հասանելիությունից (86%), ուսումնական կաբինետների լաբորատոր վիճակից և կահավորանքից (87%): Ուսանողների և դասախոսների շուրջ 32%-ը գրադարանից բավարարված չեն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հարցումների հիման վրա քոլեջը պարբերաբար ձեռք է բերում ուսումնական նյութեր, դասագրքեր, արդիականացնում ռեսուրսները:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը բոլոր կրթական ծրագրերի իրականացման համար շարունակաբար համալրում է ռեսուրսները, որոնք անհրաժեշտ են ծրագրերի վերջնարդյունքները ձեռք բերելու համար: Խումբը բարձր է գնահատում նաև հիմնադրի շարունակական աջակցությունն ու ներդրումները՝ ուղղված քոլեջի բարեկարգմանը և նյութատեխնիկական ռեսուրսների համալրմանը:

Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը գտնում է, որ զարգացման այս մոդելն ունի որոշակի սահմանափակումներ երկարաժամկետ ֆինանսական զարգացման տեսանկյունից: Հաստատության կայուն զարգացման համար անհրաժեշտ է ձևավորել երկարաժամկետ ֆինանսական քաղաքականություն, որը կփոխկապակցի ռեսուրսների պլանավորումն ու բաշխումը կրթական ծրագրերի զարգացման առաջնահերթությունների հետ: Այս քաղաքականությունը պետք է հիմք դառնա ռեսուրսների թիրախային ներդրման, բյուջետային ռիսկերի նվազեցման և զարգացման հնարավորությունների առավելագույն օգտագործման համար:

Քոլեջը պետք է ներդնի նաև ֆինանսական աղբյուրների բազմազանեցման մեխանիզմներ, որոնք կարող են ներառել դրամաշնորհային ծրագրերի որոնում և կիրառում, կարճաժամկետ մասնագիտական դասընթացների կազմակերպում, արտաբյուջետային ծրագրերի նախաձեռնում և համագործակցություն տեղական ու միջազգային դոնոր կառույցների հետ: Այս քայլերը ոչ միայն կապահովեն լրացուցիչ ֆինանսական հոսքեր, այլև կնպաստեն քոլեջի տեսանելիության, փորձի փոխանակման և կրթական ծրագրերի թարմացման գործընթացներին:

Խումբը կարևորում է նաև քոլեջում չափելի ֆինանսական և ռեսուրսային ցուցիչների սահմանումը (օր.՝ ուսանող-սարքավորում հարաբերակցություն, գրադարանային ֆոնդի

թարմացման պարբերականություն, վերապատրաստված անձնակազմ-ֆինանսական միջոցներ), որոնք հնարավորություն կտան պարբերաբար գնահատել ռեսուրսների համապատասխանությունը կրթական գործընթացներին և ապահովել հիմնավորված որոշումների կայացում:

Դրական է գնահատվում, որ քոլեջում պահպանվում են ուսումնական միջավայրի անվտանգության հիմնական պայմանները: Սակայն, տարածքային սղությունը կարող է խոչընդոտել ենթակառուցվածքների զարգացումն ու ուսանողների թվաքանակի ընդլայնումը: Հետևաբար, փորձագիտական խումբը ևս կարևորում է սեփական տարածք ունենալու քոլեջի նախաձեռնությունը՝ հիմք ընդունելով նաև քոլեջի միտումներն ուսանողների թվաքանակի աճի, միջազգային ուսանողների ներգրավման ուղղությամբ:

Փորձագիտական խումբը դրական է համարում նաև, որ քոլեջը պարբերաբար իրականացնում է ռեսուրսներից օգտվելու բավարարվածության հարցումներ: Հարցումների հիման վրա բարելավման հստակ գործողությունների պլանավորումը կնպաստի ըստ ուսուցման գործընթացի կարիքների նյութատեխնիկական բազայի շարունակական արդիականացմանը և ուսանողների ու դասախոսների գոհունակության մակարդակի բարձրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրումից հետո հաստատությունն արդիականացրել է իր ռեսուրսները մասնագիտական կրթական ծրագրերի վերջնարդյունքները ձեռք բերելու համար, քոլեջի և հիմնադրի ֆինանսական միջոցները շարունակաբար ուղղվում են ռեսուրսների բարելավմանը, մեծապես արդիականացվել են մասնագիտական կաբինետներն ու լաբորատորիաները, քայլեր է իրականացրել մասնագիտական գրականության թվայնացման ու հասանելիության ընդլայնման ուղղությամբ, հաստատությունն ապահովում է անվտանգ միջավայր ներքին շահակիցների համար, գործում են ռեսուրսներից բավարարվածության գնահատման որոշ մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 7-ի պահանջները:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

Քոլեջում գործում է հաշվետվողականության ներքնից վերև համակարգ: Քոլեջի ստորաբաժանումները կազմում են իրենց տարեկան գործունեության կատարողական զեկույցը, որը ներկայացվում է Տնօրինական խորհրդին, այնուհետև հավանության արժանանալու դեպքում՝ քոլեջի Ընդհանուր ժողովին:

Նախորդ հավատարմագրման շրջանակներում քոլեջը ստացել է խորհրդատվություն հաշվետվություններում ապահովելու վերլուծական բաղադրիչը: Այսուհանդերձ, փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հաշվետվությունները մեծապես նկարագրողական են՝ ըստ Ռազմավարական զարգացման ծրագրի ներկայացնելով կատարված աշխատանքները և պլանավորվող բարելավման ուղղությունները, որոնք հաճախ չեն կապակցվում վերհանված խնդիրներին:

Ստորաբաժանումների տարեկան կատարողական զեկույցների հիման վրա ձևավորվում է տնօրենի կողմից կազմվող տարեկան զեկույցը, որը, ըստ ՌԾ ուղղությունների ներկայացնում է քոլեջի տվյալ տարվա գործընթացները, իրականացված միջոցառումները, պարունակում տվյալներ ուսանողների թվի, շարժի վերաբերյալ: Զեկույցը տնօրենի կողմից ներկայացվում է տնօրինական խորհրդում և Ընդհանուր ժողովում:

Անդրադառնալով արտաքին հաշվետվողականությանը՝ հարկ է նշել, որ քոլեջը հաշվետվություններ է ներկայացնում ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը, ֆինանսական գործունեության հաշվետվություն ՀՀ ՊԵԿ և այլն: Քոլեջի կայքէջում և ՀՀ ԿՏԱԿ հարթակում տեղադրված են նաև շրջանավարտների, ուսումնառողների մասին տվյալներ:

Նախորդ հավատարմագրման խորհրդատվությունների հիման վրա քոլեջը բազմազանեցրել է իր մասին տեղեկատվության տարածման մեխանիզմները: Հասարակության հետ հետադարձ կապի ապահովման, ընթացակարգերի, գործընթացների թափանցիկության և հասանելիություն ապահովման նպատակով որպես տեղեկատվական հարթակներ օգտագործում է պաշտոնական կայքէջը, ֆեյսբուքյան և ինստագրամյան հարթակները:

2021թ.-ի դեկտեմբերից քոլեջի և Neetrino ստեղծարար թվային ընկերության կողմից գործարկվել է պաշտոնական կայքէջը: Այն հասանելի է 2 լեզվով՝ հայերեն և անգլերեն, որն ի տարբերություն հայերեն տարբերակի՝ դեռևս ամբողջովին համալրված չէ: Կայքէջում առկա է տեղեկատվություն քոլեջում ընթացող ուսումնական գործընթացի, առկա թափուր հաստիքների, համագործակցությունների, շրջանավարտների զբաղվածության և այլնի մասին: Քոլեջի կայքէջում հրապարակված են գործող բոլոր ընթացակարգերը, քաղաքականությունները և հաշվետվությունները, տեղադրված են թվայնացված ձեռնարկներ և գրքեր, որոնք լայնորեն կիրառվում են ուսանողության կողմից:

Քոլեջը հասարակության հետ կապերի ձևավորման և պահպանման առանձին պատասխանատու չունի: Գործընթացները համակարգում է ՈԱ պատասխանատուն, որը տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվությունը Neetrino ընկերությանը՝ կայքէջում տեղադրելու համար: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ 2023թ.-ի տվյալների համաձայն՝ կայքէջի հաճախումները և դիտումները եղել են ամենաբարձրը համեմատած նախորդ երկու տարիների՝ 3384 այցելություն և 3407 դիտում:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջի ֆեյսբուքյան էջի միջոցով քոլեջին հիմնականում դիմում են շնորհված որակավորումների ճանաչման, հավատարմագրման, ընդունելության, վարձավճարների հետ կապված հարցերով:

Հարկ է նշել նաև, որ քոլեջը տեղեկատվություն տարածելու նպատակով ակտիվ համագործակցում է այլ հարթակներ, ինչպիսիք են օրինակ՝ «Հայաստան տեղեկատուն», ԿՏԱԿ-ի կայքը, «Սփյուռ» տեղեկատվական համակարգը և այլն:

Անդրադառնալով հասարակությանը գիտելիքների փոխանցման միջոցառումներին՝ հարկ է նշել, որ քոլեջը նախաձեռնում է միջազգային և տեղական գործընկերների ներգրավմամբ վերապատրաստումներ և հարթակ հանդիսանում մյուս քոլեջների շրջանում տեղեկատվության տարածման և ընդգրկման համար: Քոլեջը ներկայացնում է իր գործունեության ուղղությունները նաև դպրոցներ այցերի շրջանակում: Հարկ է նշել, որ քոլեջի դասախոսական կազմի ներուժի կիրառմամբ մասնագիտական ուղղություններով դասընթացներ, վերապատրաստումներ դեռևս չեն իրականացվում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջում ձևավորված է ներքին և արտաքին հաշվետվողականության համակարգ, ինչը հնարավորություն է տալիս ապահովելու քոլեջում ընթացող գործընթացների մասին տեղեկատվության հասանալիությունն ինչպես ներքին շահակիցների, այնպես էլ պետության և հասարակության համար: Փորձագիտական խումբը գտնում է, որ ստորաբաժանումների հաշվետվությունները վերլուծական դարձնելը՝ ներկայացնելով ոչ միայն իրականացված քայլերը, այլև դրանց արդյունքները, խնդիրները և առաջարկվող բարելավումները, թույլ կտան հիմնավորել կայացվող որոշումները, վեր հանել համակարգային թերությունները և պլանավորել հաջորդ քայլերը իրատեսական տվյալների հիմքի վրա:

Դրական են քոլեջի կողմից տեղեկատվության հասանելիության ապահովման ուղղությամբ իրականացված քայլերը՝ կայքէջի և սոցիալական հարթակների գործարկումը, որոնք հնարավորություն են ստեղծում շահակիցների համար տեղեկացված լինել քոլեջի գործունեությունից, գործընթացներից և քաղաքականություններից: Սակայն պաշտոնական կայքի և հարթակների կիրառման արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է հստակեցնել հասարակության հետ կապերի պատասխանատվությունները և արձագանքման մեխանիզմները՝ ապահովելով շահակիցների հարցերին ժամանակին արձագանք և օժանդակության տրամադրում:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև պաշտոնական կայքէջի անգլերեն տարբերակի համալրումը, ինչը կնպաստի քոլեջի մասին տեղեկատվության հասանլիությանն օտարերկրյա դիմորդների և միջազգային կազմակերպությունների քոլեջների շրջանում:

Հասարակության հետ հարաբերությունների զարգացման տեսանկյունից կարևոր է դիտարկել ոչ միայն տեղեկատվության տարածումը, այլ նաև ակտիվ գիտելիքի փոխանակման գործընթացի ապահովումը: Քոլեջի մասնակցությունն արդեն իսկ իրականացվող հանրային միջոցառումներին դրական է, սակայն դրա հետ մեկտեղ կարևորվում է սեփական կրթական ներուժի օգտագործմամբ նախաձեռնած վերապատրաստումների, կարճաժամկետ դասընթացների իրականացումը: Այս նախաձեռնությունները կծառայեն ինչպես գիտելիքի

տարածմանը և քոլեջի սոցիալական պատասխանատվության իրացմանը, այնպես էլ կձևավորեն լրացուցիչ ֆինանսական հոսքեր զարգացման գործընթացներին ուղղելու համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ հաստատությունն ունի արտաքին ու ներքին հաշվետվողականության մեխանիզմներ, պաշտոնական կայքէջի կիրառմամբ ապահովում է հաշվետվությունների ու կանոնակարգերի հասանելիությունը, նախորդ հավատարմագրումից հետո բարելավել է թափանցիկության ապահովման մեխանիզմները՝ կիրառելով սոցիալական հարթակները հասարակության հետ կապերի ամրապնդման համար՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 8-ի պահանջներին:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2024-2028 թթ. զարգացման Ռազմավարական ծրագրում կարևորվել է արտաքին կապերն ու միջազգայնացումը՝ խնդիր դնելով ընդլայնել միջազգայնացմանն ու փորձի փոխանակմանը միտված հստակ միջոցառումները: Խնդրի իրագործման նպատակով սահմանել են հետևյալ գործողությունները՝ ակտիվացնել տեղական և միջազգային կրթական կազմակերպությունների հետ ինստիտուցիոնալ համագործակցությունը (դասախոսների վերապատրաստում, համատեղ միջոցառումների իրականացում), որոնել միջազգային դրամաշնորհային ծրագրեր՝ քոլեջի միջազգային տեսանելիության բարձացման նպատակով, բազմազանեցնել քոլեջի մասին տեղեկատվության տարածման միջոցները՝ նպաստելով քոլեջի հեղինակության բարձացմանը, զարգացնել հանրության գիտելիքների փոխանցման մեխանիզմները՝ հիմք ընդունելով քոլեջի ոլորտային առանձնահատկությունները: Խնդրի իրագործման գործողությունների համար սահմանված են առաջընթացի գնահատման ցուցիչներ, որոնցից մի քանիսը չափելի են, օրինակ դրամաշնորհային հիմնադրամների և կազմակերպությունների առնվազն 1 ծրագրի նախագիծ: Գործողությունների իրականացումից ակնկալվող արդյունքները դեռևս հստակեցված չեն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նախորդ հավատարմագրումից հետո քոլեջն ընդլայնել է տեղական համագործացությունների շրջանակը ուսանողների պրակտիկաների կազմակերպման, միջազգային համագործակցությունները՝ փորձի փոխանակման նպատակով, ակտիվացրել է պաշտոնական կայքէջի և սոցիալական հարթակների միջոցով տեղեկատվության տարածման աշխատանքները, սակայն դրամաշնորհային ծրագրերի, հանրությանը գիտելիքների փոխանցման ուղղությամբ հստակ պլանավորում դեռևս չի իրականացրել:

Նախորդ հավատարմագրման շրջանակում քոլեջը ստացել էր խորհրդատվություն սահմանելու արտաքին կապերի կառավարման պատասխանատվության հստակ շրջանակ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման ուղղությամբ աշխատանքները հասարակական հիմունքներով համակարգում է քոլեջի ՈԱ պատասխանատուն, որը զբաղվում է տեղական և միջազգային բժշկական ուսումնական հաստատությունների հետ կապերի հաստատմամբ կրթական ծրագրերի համեմատական վերլուծության և փորձի փոխանակման նպատակով: Տեղական արտաքին կապերի զարգացման ուղղությամբ աշխատանքներ իրականացնում են նաև տնօրենի տեղակալը, պրակտիկայի և կարիերայի պատասխանատուն և Ուսանողական խորհուրդը՝ համագործակցելով գործատուների, տարածքային զբաղվածության կենտրոնի և այլ կազմակերպությունների հետ, ներգրավված լինելով ուսանողների հավաքագրման, պրակտիկաների ուղղությամբ կապերի հաստատման աշխատանքներում:

ՄՈՒՀ-ն ունի 21 համագործակցության պայմանագիր և հուշագիր, որոնցից ներկայումս գործող են 14-ը: Հաստատությունը կնքել է համագործակցության պայմանագրեր Բելառուսի Հանրապետության «Գրոդնոյի պետական բժշկական քոլեջի», Ռուսաստանի Դաշնության «Մոսկվայի պետական բժշկական քոլեջի» և Վրաստանի Հանրապետության «Պանացեա» հանրային քոլեջի հետ: 2024 թ. Բելոռուսի «Գրոդնոյի պետական բժշկական քոլեջի» հետ համագործակցության շրջանակներում քոլեջի դասախոսները, վարչական աշխատակիցները և ուսանողները մասնակցել են բժշկական ուղղությամբ գիտագործնական կոնֆերանսների Բելոռուսի Հանրապետությունում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Գրոդնոյի պետական բժշկական քոլեջի հետ քոլեջը նախաձեռնել է ուսանողների շարժունության և փորձի փոխանակման ծրագիր, որի շրջանակներում պլանավորել է քոլեջի ուսանողների երկշաբաթյա այց Գրոդնոյի պետական բժշկական քոլեջ, սակայն սոցիալական խնդիրների և ուսանողների դիմելու բացակայությամբ պայմանավորված ծրագիրը դեռևս չի իրագործվել:

2024 թ. Վրաստանի Հանրապետության «Պանացեա» հանրային քոլեջ այցի արդյունքում կնքվել է երկկողմ համագործակցության հուշագիր, ըստ որի ձեռք է բերվել պայմանավորվածություն հեռավար ձևաչափով աշխատանքային հանդիպումների, համատեղ աշխատաժողովների և գիտական կոնֆերանսների պլանավորման կազմակերպման վերաբերյալ: 2024-2025 ուստարվա ընթացքում «Պանացեա» հանրային քոլեջի հետ նախատեսված է եղել իրականացնել «Ատամնատեխնիկական գործ» և «Մանկաբարձական գործ» ՄԿԾ-երի բենչմարքինգ: Կազմակերպչական հարցերով պայմանավորված բենչմարքինգի իրականացման գործընթացը դեռևս չի մեկնարկել և նախատեսվում է առաջիկայում:

Ռուսաստանի Դաշնության «Մոսկվայի պետական բժշկական քոլեջի» համագործակցության հաստատումը դեռևս չի հանգեցրել տեսանելի արդյունքների փորձի փոխանակման ուղղությամբ:

Միջազգայնացման ընդլայնման ուղությամբ համագործակցության է հաստատվել նաև Բելգիայի Թագավորության «Դասավանդողների մասնագիտական վերապատրաստման կենտրոնի» հետ, որի արդյունքում 2023թ. Քոլեջի նախաձեռնությամբ տեղի է ունեցել

դասավանդման ժամանակակից մեթոդներին նվիրված վեբինար, որին մասնակցել են նաև ՀՀ բժշկական այլ քոլեջների դասավանդողները։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Էրազմուս + ծրագրերին մասնակցելու ուղղությամբ դեռևս աշխատանքներ չեն իրականացվել։

Օտարերկրյա ուսանողների հավաքագրման նպատակով 2023թ. ՄՈՒՀ-ը կնքել է համագործակցության պայմանագիր «Քեմփս Ինտերնեյշնլ» ՍՊԸ-ի հետ՝ 5 տարի ժամկետով։ Ընդլայնելով այս գործընթացը՝ 2024թ. կնքված հուշագրով մեկնարկել է համագործակցությունը «Ֆյուչր Պրո» ՍՊԸ-ի հետ՝ պայմանագիր կնքելով 3 տարի ժամկետով։ Կազմակերպություններն ապահովում են օտարերկրյա պոտենցիալ դիմորդների շրջանում գովազդի, ուսումնական գործընթացի, վարձավճարների, դիմումների և փաստաթղթերի ձևակերպման վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը։

Անդրադառնալով տեղական կապերին և համագործացություններին՝ հարկ է նշել, որ նախորդ հավատարմագրումից հետո քոլեջը կրթական ծրագրերի համեմատական վերլուծության նպատակով համագործացում է ՀՀ բժշկական ուղղվածությամբ քոլեջների, այդ թվում՝ Երևանի հենակետային, Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական, Վարդենիսի բժշկահումանիտար քոլեջների հետ։

Բոլոր կրթական ծրագրերի ուղղությամբ պրակտիկաների կազմակերպման նպատակով քոլեջը համագործակցության պայմանագրեր է կնքել ՀՀ մի շարք բժշկական հաստատությունների և դեղատների հետ։ Այդ թվում են «Արմենիա» Հանրապետական բժշկական կենտրոնը, «Մարգարյան» ծննդատունը, «Վլադիմիր Ավագյան», «Բեգլարյան» բժշկական կենտրոնները («Քույրական գործ», «Մանակաբարձական գործ» կրթական ծրագրեր), «Լևոն և Լամարա», «Ալֆա ֆարմ», «Առնիկա» դեղատնային ցանցերի («Դեղագործություն» կրթական ծրագիր), «Նյու-Հոպ», «Օնլի յու» ատամնաբուժական կլինիկաների և մասնավոր ատամնաբուժական այլ կլինիկաների հետ («Ատամնատեխնիկական գործ» կրթական ծրագիր)։

Անդրադառնալով ներքին շահակիցների օտար լեզուների իմացությանը՝ հարկ է նշել, որ ըստ ինքնավերլուծության 2022-2024թթ. ընթացքում ռուսերենին տիրապետողների թիվը դասավանդողների շրջանում չի փոխվել և պահպանվել է 100%-ի մակարդակով։ Վարչական աշխատակիցների շրջանում ռուսերենի իմացությունն աճել է 68.7%-ից 94.1%-ի։ Ուսանողների շրջանում ռուսերենի իմացությունը նվազել է 78%-ից մինչև 65%։ Անգլերենին տիրապետողների տոկոսը դասավանդողների շրջանում աճել է 42.8%-ից 50%-ի։ Վարչական աշխատակիցների շրջանում անգլերենի իմացությունն աճել է 28.1%-ից 55.8%-ի։ Ուսանողների շրջանում անգլերենի իմացությունը նվազել է 14.3%-ից մինչև 7%։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ 2024 թ.-ին ներքին շահակիցների օտար լեզուների մակարդակը բարձրացնելու նպատակով քոլեջը կնքել է պայմանագիր «Բաբելոն» ուսումնական կենտրոնի հետ։ Համագործակցության շրջանակում գնահատվել է դասախոսների լեզվաիմացության մակարդակը՝ հիմնականում տատանվելով A1-A2 մակարդակների միջև, ուսանողների լեզվաիմացության մակարդակի գնահատում դեռևս չի իրականացվել։ Պրակտիկ ոլորտից ներգրավված որոշ դասախոսներ տիրապետում են B2-C1 մակարդակների՝ դասավանդելով անգլերենով և ունենալով միջազգային հրապարակումներ։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ «Բաբելոն» ուսումնական կենտրոնի կողմից դասընթացների անցկացումը քոլեջի ներքին շահակիցների համար նախատեսվում է առաջիկայում: Նախորդ հավատարմագրումից հետո քոլեջի դասախոսների կողմից ևս դասընթացներ են կազմակերպել ներքին շահակիցների համար, սակայն դրանք հստակ պարբերականություն չեն կրել:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը շարունակաբար ընդլայնել է տեղական համագործակցությունների շրջանակը՝ հատկապես բժշկական կենտրոնների, դեղատնային ցանցերի և ստոմատոլոգիական հաստատությունների հետ, ինչը նպաստում է ուսանողների պրակտիկ հմտությունների ձևավորմանը, իրական աշխատանքային միջավայրին ծանոթացմանը և ապագայում աշխատանքի տեղավորման հնարավորությունների ավելացմանը:

Միջազգայնացման ուղղությամբ իրականացված քայլերը՝ ուսանողների հետազոտական աշխատանքի ներկայացումը միջազգային հարթակում, դասախոսների ներգրավումը վեբինարներում և օտարերկրյա ուսանողների ընդունելությունը, ստեղծում են միջազգայնացման զարգացման հիմքեր: Փորձագիտական խումբը գտնում է, որ դրանց առավել մեծ ազդեցության ապահովման նպատակով անհրաժեշտ է սահմանել հստակ նպատակներ և չափելի ցուցիչներ, որոնք թույլ կտան գնահատել միջազգային համագործակցությունների արդյունավետությունը և ներդրումը քոլեջի զարգացման մեջ: Այս ցուցիչները կարող են ներառել միջազգային հրապարակումների քանակը, շարժունության ծրագրերին մասնակցած շահակիցների թիվը, համատեղ նախաձեռնած կրթական միջոցառումների քանակը և այլն:

Դրական է, որ քոլեջը ձևավորել է արտաքին կապերի համակարգման որոշակի կառուցվածք՝ ներգրավելով ՈՒԱ պատասխանատուին, տնօրենի տեղակալին, պրակտիկայի և կարիերայի պատասխանատուին և Ուսանողական խորհուրդին: Այդուհանդերձ, գործընթացների արդյունավետության բարձրացման համար կարևոր է հստակեցնել այս գործառույթները՝ դրանք ամրագրելով պաշտոնների նկարագրերում: Սա կհանգեցնի գործունեության կանխատեսելիության, պատասխանատվության հստակ բաշխման և միջազգայնացման արդյունավետության բարձրացման:

Խումբը դրական է համարում նաև քոլեջի նախաձեռնած համագործակցությունը տեղական և միջազգային քոլեջների հետ համեմատական վերլուծության և ծրագրերի բարելավման համար: Նման ձևաչափի գործընկերությունները կարող են նպաստել կրթական ծրագրերի արդիականացմանը և որակի բարձրացմանը:

Խրախուսվում է նաև կարողությունների զարգացման միջազգային ծրագրերին մասնակցության ընդլայնումը, մասնավորապես՝ Էրազմուս+ ծրագրում ներգրավվելը: Սա կստեղծի հնարավորություն դասախոսների և ուսանողների համար զարգացնելու հաղորդակցման, մասնագիտական համագործակցության և միջազգային փորձի փոխանակման կարողությունները՝ նպաստելով նաև լավագույն փորձի ուսումնասիրությանը և տեղայնացմանը:

Քոլեջի կատարած գնահատումը շահակիցների օտար լեզվի իմացության վերաբերյալ դիտվում է որպես կարևոր նախադրյալ միջազգայնացման և միջազգային փորձի փոխանակման համար: Սակայն այդ գործընթացի շարունակականությունը պետք է ապահովվի պարբերական դասընթացներով՝ դասախոսների և ուսանողների օտարալեզու հաղորդակցման, մասնագիտական գրականության օգտագործման և շարժունության ծրագրերում մասնակցության կարողությունները զարգացնելու նպատակով: Լեզվական պատրաստվածության բարձրացումը կնպաստի նաև միջազգային գործընկերների հետ արդյունավետ շփման և համատեղ աշխատանքների իրականացման մշակույթի ձևավորմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն իր ռազմավարությամբ կարևորում է արտաքին կապերի ամրապնդումը և միջազգայնացման գործընթացների իրականացումը, նախորդ հավատարմագրումից հետո քայլեր է ձեռնարկել համագործակցության շրջանակի ընդլայնման ուղղությամբ, օգտագործել է միջազգային կապերը դասախոսական կազմի վերապատրաստման հարթակներ ստեղծելու համար, արդյունավետորեն համագործակցում է գործատուների հետ ուսանողների պրակտիկաների կազմակերպման նպատակով, ինչպես նաև իրականացնում է միջոցառումներ ուսանողների՝ օտար լեզվի իմացության բարելավման ուղղությամբ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 9-ի պահանջները:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

Քոլեջում որակի ապահովման ներքին համակարգի ներդրման աշխատանքները մեկնարկել են 2018-2019 ուսումնական տարվանից: Քոլեջն իր 2024-2028 թթ. Ռազմավարական ծրագրում որպես խնդիր շեշտադրել է Որակի ապահովման մշակույթի կատարելագործումը: ՈՆԱ քաղաքականությամբ ամրագրվել են քոլեջում ՈԱ համակարգի նպատակները և սկզբունքները: Այսպիսով, ՈՆԱ քաղաքականության հիմնական նպատակը որակի ներքին մշակույթի ձևավորումը, տարածումն ու զարգացումն է՝ քոլեջի ռազմավարական նպատակներին և խնդիրներին համապատասխան առաքելության իրականացմամբ: Նախորդ հավատարմագրումից հետո քոլեջը 2024 թվականին լրամշակել է Որակի ներքին ապահովման ձեռնարկը, որը խմբագրման է ենթարկվել արտաքին երկու փորձագետների կողմից: Ձեռնարկում ամփոփվել են տարբեր տարիներին քոլեջում մշակված ՈԱ գործընթացին առնչվող փաստաթղթերը: Ներկայացված են դասախոսական կազմի գործունեության գնահատման մեխանիզմները,

ուսանողի գիտելիքի գնահատման համակարգը, կրթական ծրագրերի բենչմարքինգի գործընթացը, կարիքների վերհանման նպատակով իրականացվող հարցումները, որակի ապահովման պատասխանատուից գոհունակության գնահատման հարցումները, ՈԱ կազմակերպական սխեման և այլն:

Անդրադառնալով ՈԱ գործընթացների պլանավորմանը՝ հարկ է նշել, որ ՈԱ առանձին տարեկան աշխատանքային պլան քոլեջը չի մշակում: Ինչպես մյուս ստորաբաժանումները, ՈԱ պլանը ևս երկարաժամկետ է՝ կազմված ՌԾ ողջ ժամկետի՝ 2024-2028թթ.-ի համար: ՌԾ 7 նպատակներն ընդգրկող ՈԱ պլանում սահմանված են գործողությունները/միջոցառումները, իրականացման ժամկետները (ուսումնական տարի կամ կիսամյակ), պատասխանատուները (ՈԱ պատասխանատու, Ուսմասի վարիչ, տնօրեն և այլք), անհրաժեշտ ռեսուրսները (առանց ֆինանսական հստակեցման՝ քոլեջի բյուջե, միայն մեկ գործողության համար՝ բյուջեի 5%), ակնկալվող արդյունքները (հիմնականում նոր փաստաթղթի մշակում կամ հաստատում՝ կանոնակարգ, կատարողական զեկույց, հարցումների արդյունքներ և այլն):

Որակի ապահովման աշխատանքների համակարգման համար քոլեջն ունի որակի ապահովման մեկ պատասխանատու՝ շաբաթական 12 ժամ ծանրաբեռնվածությամբ: Ըստ անհրաժեշտության՝ ՈԱ պատասխանատուի համակարգմամբ ձևավորվում են աշխատանքային խմբեր վերլուծությունների իրականացման նպատակով: ՈԱ գործընթացներում ներգրավված ներկայացուցիչներին խրախուսելու համար քոլեջը, ըստ անհրաժեշտության, տրամադրում է նաև ֆինանսական միջոցներ (օրինակ՝ ինքնավերլուծության աշխատանքներում ներգրավված ներկայացուցիչներն արժանացել են ֆինանսական խրախուսման):

ՈԱ պատասխանատուն հաշվետու է տնօրենին, ՈԱ աշխատանքների վերաբերյալ կատարողականի զեկույցը ներկայացնում է տնօրինական խորհրդում և Ընդհանուր ժողովում: Պաշտոնի անձնագրի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ՈԱ պատասխանատուի համար կարիքների վերհանման գործընթացներից բացի նախատեսված է ֆինանսատնտեսական, կադրերի զարգացման ուղղությամբ մի շարք գործընթացների իրականացում, այսպես օրինակ՝ լրացուցիչ աշխատանքների համար անհրաժեշտ ծախսերի նախահաշվի պատրաստում, քոլեջի տարեկան ֆինանսատնտեսական ծրագրի եկամուտների և ծախսերի նախահաշվի վերաբերյալ առաջարկությունների ներկայացում, կադրերի վերապատրաստման և մասնագիտական ուսուցման աշխատանքների համակարգում և այլն: Հարկ է նշել, որ գործընթացների իրականացման և կարիքների վերհանման գործընթացները տարանջատված չեն, շահերի բախման ռիսկերի գնահատում և վերլուծություն քոլեջը չի իրականացրել. հաճախ ՈԱ պատասխանատուն ընդգրկված է կրթական ծրագրերի, կառավարման գործընթացների բարելավման ուղղությամբ իրականացվող աշխատանքներում, այնուհետև իրականացնում է նույն գործընթացների արդյունավետության գնահատումը:

Շահակիցների կարիքների վերհանման նպատակով իրականացվում են հարցումներ և ֆոկուսխմբային քննարկումներ: Հարցումներ են իրականացվում դասախոսների կարիքների գնահատման, կրթական ռեսուրսներից բավարարման (դասախոսների շրջանում), դասավանդման, դասընթացների արդյունավետության որակի գնահատման, կրթական ռեսուրսներից, ՈՆԱ գործընթացներից բավարարավածության, խորհրդատուների

գործունեության արդյունավետության վերաբերյալ (ուսանողների շրջանում), շրջանավարտների բավարարվածության (շրջանավարտների շրջանում), արտաքին շահակիցների բավարարվածության (գործատուների շրջանում) ուղղություններով: Ներքին շահակիցների հետ ֆոկուսխմբային հանդիպումների ժամանակ քննարկվում են հարցումների արդյունքները, բարելավման հնարավոր ուղղությունները: Նման հանդիպումները նպատակ ունեն նաև շահակիցներին իրազեկելու ՈԱ գործընթացների և իրականացված գործողությունների ուղղությամբ:

Հարցաշարերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանք պարունակում են հիմնականում փակ հարցեր և դրանց մեկնաբանության վերաբերյալ դաշտ: Ուսանողները և դասախոսները պարբերաբար մասնակցում են հարցումներին, սակայն առաջարկները հիմնականում ներկայացվում են քննարկումների ընթացքում: Գործատուների շրջանում հարցումը տեղի է ունեցել դեռևս մեկ անգամ, որով գնահատվել է ՈԱ պատասխանատուի հետ համագործակցության արդյունավետությունը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հարցումների արդյունքները ենթարկվել են որակական և քանակական վերլուծության, ներկայացվել տնօրինական խորհրդում, Ընդհանուր ժողովում: Արդյունքում տեղի են ունեցել ռեսուրսային համալրումներ և գործիքների, նյութերի արդիականացում: ՈԱ պատասխանատուի նախաձեռնությամբ կազմակերպվել է նաև կրթական ծրագրերի բենչմարքինգի գործընթացը: Նախորդ հավատարմագրումից հետո ՈՆԱ համակարգի աջակցությամբ քոլեջում վերանայվել են գործող ընթացակարգերը, ստեղծվել են միասնական պլանավորման և հաշվետվողականության ձևաչափեր: ՈԱ գործընթացները հիմնականում գտնվում են ՊԻԳԲ շրջափուլի «Իրականացման» փուլում, շրջափուլի փակման և կրկին մեկնարկի փուլեր դեռևս չեն արձանագրվել:

Անդրադառնալով քոլեջի ներկայացրած ինքնավերլուծությանը՝ հարկ է նշել, որ ինքնավերլուծության իրականացման համար ձևավորվել է աշխատանքային խումբ, որտեղ ներգրավված են եղել քոլեջի վարչական, դասավանդող կազմի ներկայացուցիչներ, ուսանողներ, ինչպես նաև Ընդհանուր ժողովում ներգրավված արտաքին շահակիցը: Ինքնավերլուծությունում հիմնականում ներկայացվել են անհրաժեշտ հիմքերը, տվյալները, սակայն ինքնավերլուծությունն առավելապես նկարագրական բնույթ է ունեցել՝ առանց արդյունքների վերլուծության:

ՈԱ գործընթացների թափանցիկության ապահովման նպատակով քոլեջն օգտագործում է պաշտոնական կայքէջը՝ հրապարակելով ՈԱ գործընթացներին առնչվող ընթացակարգերը, շահակիցների բավարարվածության հարցումները, արդյունքների վերլուծությունը, կատարողական բոլոր զեկույցները:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում նախորդ հավատարմագրման արդյունքում ձեռնարկված քայլերը Որակի ներքին ապահովման ձեռնարկի լրամշակման, պլանավորման ու հաշվետվողականության ձևաչափերի ներդրման, ինչպես նաև շահակիցների հետ հարցումների և քննարկումների կազմակերպման ուղղությամբ: Այս

գործողությունները նպաստել են հաշվետվողականության գործընթացների կանոնակարգմանը և ռեսուրսների բարելավմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ որակի ապահովման համակարգը կարող է իրական ազդեցություն ունենալ կրթության որակի և կրթական ծրագրերի բարելավման վրա այն դեպքում, երբ հաստատության զարգացման բոլոր ուղղություններով տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը վերածվում են կառավարչական որոշումների կայացման հիմքի: Դրա համար անհրաժեշտ է հարցումների արդյունքներից բացի իրականացնել նաև պատճառահետևանքային վերլուծություն, համադրել արդյունքները նախապես սահմանված ակնկալվող արդյունքների հետ: Այս մոտեցումը կօգնի կառավարման օղակներին գնահատել իրավիճակն ու բարելավման ավելի նպատակային քայլեր իրականացնել:

Դրական է, որ քոլեջը փորձում է պլանավորումը փոխկապակցել Ռազմավարական ծրագրին, սակայն կարևոր է նաև որակի ապահովման տարեկան կարճաժամկետ պլանավորման իրականացումը, ինչը համակարգի գործունեությունը կդարձնի առավել պլանավորված ու կոնկրետ՝ տարեկան գործողությունների տեսքով: Տարեկան պլանի առկայությունը հնարավորություն կտա պարբերաբար վերանայել իրականացման առաջընթացը, ճշգրտել գործողությունները և առավել ճկուն արձագանքել բացահայտված խնդիրներին: Սա նաև կնպաստի ՊԻԳԲ շրջափուլի բոլոր փուլերի լիարժեք գործարկմանը:

ՈՒԱ պատասխանատուի գործառույթների տարանջատումը և հստակեցումը կարևոր նախապայման է համակարգի օբյեկտիվության և վստահելիության ամրապնդման համար: Փորձագիտական խումբը գտնում է, որ գնահատման և բարելավման գործընթացները չնույնացնելու համար անհրաժեշտ է սահմանել հստակ պատասխանատվության ոլորտներ և ապահովել, որ գնահատողը մասնակցի ոչ թե նույն գործընթացի իրականացմանը, այլ՝ վերլուծությանը: Սա հնարավորություն կտա խուսափել շահերի բախումից և բարձրացնել ՈՒԱ արդյունքների արժանահավատությունը:

Քոլեջն անհրաժեշտություն ունի վերանայելու հարցումների կառուցվածքը և բովանդակությունը՝ բաց հարցերի և խորացված վերլուծության հնարավորությամբ: Սա թույլ կտա բացահայտել ոչ միայն գոհունակության մակարդակը, այլև բարելավման ուղղությունները՝ ինչպես ուսանողների և դասախոսների, այնպես էլ գործատուների շրջանակում: Գործատուների կարիքների պարբերաբար վերհանումը շրջանավարտների պատրաստվածության և աշխատանքի որակի վերաբերյալ, թույլ կտա քոլեջին իր կրթական ծրագրերը համապատասխանեցնել աշխատաշուկայի պահանջներին և նպաստել շրջանավարտների մասնագիտական զբաղվածության ցուցանիշների աճին:

Ինքնավերլուծության գործընթացը կարող է դառնալ ներքին վերանայման արդյունավետ գործիք, եթե այն գործընթացները նկարագրելուց զատ վերլուծի իրականացված գործողությունների ազդեցությունը և արդյունավետությունը հաստատության զարգացման վրա, այսկերպ ինքնավերլուծությունն օգտագործելու ոչ թե որպես փաստերի ներկայացման, այլ՝ որպես գործնական պլանավորման հիմք:

Փորձագիտական խումբը գտնում է, որ որակի ապահովման թափանցիկության ապահովումը ոչ միայն բարձրացնում է շահակիցների վստահությունը, այլ նաև ձևավորում

հաշվետվողականության մշակույթ: Սակայն թափանցիկությունն առավել արդյունավետ կլինի, եթե ուղեկցվի պարզաբանումներով՝ թե ինչ որոշումներ են կայացվել հավաքագրված տվյալների հիման վրա, և ինչ արդյունքներ են գրանցվել: Այս մոտեցումը թույլ կտա շահակիցներին տեսնել իրենց մասնակցության ազդեցությունը և խթանել ավելի ակտիվ ներգրավվածությունը կարիքների վերհանման ու որոշումների կայացման գործընթացներում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն իր ՈԱ քաղաքականությամբ սահմանել է որակի ապահովման գործընթացների իրականացման նպատակները, տրամադրում է համապատասխան մարդկային և նյութական ռեսուրսներ այդ գործընթացների իրականացման համար, նախորդ հավատարմագրումից հետո քայլեր է ձեռնարկել խթանելու շահակիցների ներգրավվածությունը ՈԱ գործընթացներում, կարիքների վերհանման գործիքները նպաստում են ներքին շահակիցների և կրթական միջավայրի կարիքներ վերհանմանը և դրանք հաշվի են առնվում ռեսուրսային բարելավումների իրականացման ընթացքում, ինչպես նաև ապահովում է որակի ապահովման գործընթացների, ընթացակարգերի և վերլուծությունների հասանելիությունը պաշտոնական կայքէջի միջոցով՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 10-ի պահանջները:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելություն և նպատակներ	**Բավարարում է**
2. Կառավարում ու վարչարարություն	**Չի բավարարում**
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	**Բավարարում է**
4. Ուսանողներ	**Բավարարում է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	**Բավարարում է**
6. Հետազոտություն և զարգացում	**Չի բավարարում**
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	**Բավարարում է**
8.Հասարակական պատասխանատվություն	**Բավարարում է**
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	**Բավարարում է**
10. Որակի ներքին ապահովման համակարգ	**Բավարարում է**

Գայանե Ավետիսյան
Փորձագիտական խմբի ղեկավար

15-ը օգոստոսի, 2025 թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Գայանե Ավետիսյան՝ 1987–1992 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի աշխարհագրական ֆակուլտետում՝ ստանալով աշխարհագետի և աշխարհագրության ուսուցչի որակավորում: 2006 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել աշխարհագրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, իսկ 2014 թ. արժանացել է դոցենտի գիտական կոչման: Գիտական հետաքրքրությունների շրջանակում ընդգրկված են աշխարհագրական կրթության, տարածական զարգացման և զբոսաշրջության հիմնախնդիրները: 25 գիտական հոդվածների հեղինակ է:

Մասնագիտական գործունեությունը սկսել է 1991 թ.՝ դասավանդելով աշխարհագրություն Գյումրու տարբեր հանրակրթական դպրոցներում (թիվ 26, թիվ 9 և թիվ 1 ավագ դպրոց)՝ մինչև 2020 թ. ներառյալ: 1994 թ.-ից մինչ օրս աշխատում է Շիրակի պետական համալսարանում՝ որպես աշխարհագրության և սերվիսի ամբիոնի դոցենտ: 2011–2012 թթ. դասախոսել է նաև ԵԿՏԱ համալսարանի Գյումրու մասնաճյուղում՝ զբոսաշրջության և սպասարկման նոր տեխնոլոգիաների ամբիոնում: 2019–2022 թթ. եղել է Շիրակի պետական համալսարանի ռեկտորի օգնականը: 2022–2023 թթ. զբաղեցրել է ՇՊՀ աշխարհագրության և սերվիսի ամբիոնի վարիչի պաշտոնը, իսկ 2023 թ.-ից ղեկավարում է ՇՊՀ Որակի ապահովման բաժինը:

Ռոզա Գրիգորյան՝ սովորել է Երևանի պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետի դեղագործական-քիմիա բաժնում: 2005-2006թթ. աշխատել է «Վալերե» ՍՊԸ-ում, 2006-2010թթ.՝ «Անիս» ՍՊԸ-ում: 2015-2019թթ. դասավանդել է Հրազդանի պետական բժշկական քոլեջում, զբաղեցրել է նաև ամբիոնի վարիչի պաշտոնը: 2019թ.-ից մինչ այժմ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի դասախոս է, ղեկավարում է Դեղագործական և ատամնատեխնիկական մասնագիտական մոդուլների ամբիոնը:

Արշակ Մարկոսյան՝ 2003–2008 թթ. սովորել է Երևանի պետական բժշկական համալսարանում՝ նախ ընդհանուր բժշկության, ապա ռազմաբժշկական ֆակուլտետներում: 2008–2009 թթ. անցել է ինտերնատուրա: 2012–2014 թթ. ուսանել է Ռուսաստանի Դաշնության Սանկտ Պետերբուրգի Ռազմաբժշկական ակադեմիայում՝ մասնագիտանալով թունաբանական բժշկության ոլորտում: Որպես բժիշկ-թունաբան, մասնագիտական վերապատրաստումներ է անցել Սանկտ Պետերբուրգում՝ 2018 թ. «Ընդհանուր գործունեության բժիշկ» մասնագիտությամբ (3,5 ամիս), իսկ 2022 թ. Մեչնիկովի անվան բժշկական ինստիտուտում՝ «Բժիշկ-թունաբան» մասնագիտությամբ (3,5 ամիս): 2019 թ. հինգամսյա հումանիտար առաքելությամբ՝ որպես բժշկական խմբի հրամանատար, գործուղվել է Սիրիայի Արաբական Հանրապետության Հալեպ քաղաք: 2021 թ. աշխատել է Ռուսաստանի Դաշնության Լենինգրադի մարզի Լոմոնոսովի շրջանում՝ որպես ընդհանուր գործունեության բժիշկ և ամբուլատորիայի պետ: 2022 թ.

հանդիսանում է ՀՀ ԳԱԱ Լ. Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի հայցորդ: 2024 թ. հոկտեմբերից մինչև 2025 թ. ապրիլը դասախոսել է Հայբուսակ համալսարանում: 2024 թ. սեպտեմբերից մինչ այժմ դասախոսում է Հայկական բժշկական ինստիտուտում: Ավելի քան 14 գիտական հոդվածների հեղինակ և համահեղինակ է:

Անգելինա Տոնոյան՝ սովորում է Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջում՝ «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված ուսուցմամբ» մասնագիտությամբ: Մասնակցել է ՈՒԱԿ-ի «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող-փորձագետների պատրաստման դասընթացին: Որպես ուսանող-փորձագետ ընդգրկված է եղել մի քանի քոլեջների ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական խմբերում:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

25.06.2025թ.-27.06.2025թ.

N.	25.06.2025թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում տնօրենի հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի հետ	10:30	11:20	50 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծություն իրականացրած խմբի անդամների հետ	11:30	12:10	40 րոպե
4.	Ավարտական քննությունների դիտարկում	12:20	13:00	40 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե
6.	Հանդիպում շրջանավարտների հետ	14:20	15:10	50 րոպե
7.	Հանդիպում Ընդհանուր ժողովի անդամների հետ	15:20	16:10	50 րոպե
8.	Հանդիպում գործատուների հետ	16:20	17:20	60 րոպե
9.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:30	18:20	50 րոպե

N.	26.06.2025թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում դասախոսական կազմի (10-12 ներկայացուցիչ) հետ	10:30	11:20	50 րոպե
3.	Հանդիպում ուսանողների (10-12 ներկայացուցիչ) հետ	11:30	12:20	50 րոպե
4.	Հանդիպում ՈւԽ ներկայացուցիչների հետ	12:30	13:10	40 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:20	14:20	60 րոպե

6.	Զուգահեռ հանդիպում **«Քույրական գործ»** և **«Մանկաբարձական գործ»** մասնագիտության կրթական ծրագրերի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում **«Դեղագործություն»** մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	14:30	15:20	50 րոպե
7.	Զուգահեռ հանդիպում **«Քույրական գործ»** և **«Մանկաբարձական գործ»** մասնագիտությունների կրթական ծրագրերի պատասխանատուի և դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում **«Դեղագործություն»** մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատուի և դասախոսների հետ	15:30	16:30	60 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում		16:40	19:00	140 րոպե

N.	**27.06.2025թ.**	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ստորաբաժանումների ղեկավարների (Ուսումնական մասի վարիչ, պրակտիկայի վարիչ, կարիերայի պատասխատու, գրադարանավար, լաբորատորիաների վարիչներ, բուժքույր, գլխավոր հաշվապահ, քաղպաշտպանության շտաբի պետ, ՄՌԿ և ընդհանուր բաժին) հետ	09:30	10:40	70 րոպե
2.	Հանդիպում Որակի ապահովման պատասխանատուի հետ	10:50	11:40	50 րոպե
3.	Բաց հանդիպում	11:50	12:30	40 րոպե
4.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	12:30	13:30	60 րոպե
5	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:40	14:30	50 րոպե

.				
6.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	14:40	17:30	110 րոպե
7.	Ամփոփիչ հանդիպում ղեկավար կազմի հետ	17:40	18:00	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Նախորդ Ռազմավարական ծրագիր	1
2.	ՄՈՒՀ-ի առաքելության և նպատակների գնահատման ու մշտադիտարկման քաղաքականություն /մինչև 2024թ,/	1
3.	Տնօրենի տարեկան հաշվոտվություն /վերջին 3 տարվա/	1
4.	Ստորաբաժանումների ղեկավարների տարեկան հաշվետվություններ /վերջին 3 տարվա/	1
5.	Ընդհանուր ժողովի նիստերի արձանագրություններ	2
6.	Պաշտոնի նկարագրեր	2
7.	Հաստիքացուցակ /աշխատավարձերը ներառյալ/	2
8.	Բյուջե և կատարողական /վերջին 3 տարվա/	2
9.	Բոլոր ստորաբաժանումների աշխատանքային պլաններ /վերջին 3 տարվա/	2
10.	ՌԾ 2023-2024 թթ. կատարողականի զեկույց	2
11.	«Քույրական գործ», «Մանկաբարձական գործ», «Դեղագործություն» և «Ատամնատեխնիկակա գործ» մասնագիտությունների ուս պլաններ /հիմնական կրթություն/	3
12.	Նախորդ կրթական ծրագրեր	3
13.	Ընթացիկ գնահատման թերթիկներ	3
14.	Դասալսումների թերթիկներ	3
15.	Պետական հարցատոմսերի նմուշներ	3
16.	Գնահատման չափանիշներ	3
17.	Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվություններ, վերլուծություններ	3


18.	Շրջանավարտների զբաղվածության տվյալներ	4
19.	Ուսանողների և շրջանավարտների քանակը՝ վերջին երեք տարիների համար	4
20.	Շրջանավարտների բազա	4
21.	Շրջանավարտների զբաղվածության վերլուծություն	4
22.	Դասախոսական կազմի պայմանագրերի օրինակներ /հիմնական, համատեղող, ժամավճարային հիմունքներով աշխատող/	5
23.	Նախապատրաստական դասընթացների ծրագրեր	5
24.	Դասախոսական կազմի ցանկ՝ նշելով պրակտիկ փորձառությամբ դասախոսներին	5
25.	Գործատուների ցանկ	5
26.	Փոխադարձ դասալսումների ժամանակացույց /դասախոսներ, ամբիոններ/	5
27.	Ամբիոնների նիստերի արձանագրություններ	5
28.	Վերջին երեք տարիներին վերապատրաստված դասախոսների ցանկ	5
29.	Փոխադարձ դասալսումների ժամանակացույց /դասախոսների, ամբիոնների/	5
30.	Դասալսումների փաթեթներ /տարբեր կրթական ծրագրերի համար/	5
31.	Ռեֆերատներ, կուրսային, անհատական աշխատանքներ /տարբեր կրթական ծրագրերից, տարբեր տարիների/	6
32.	Հետազոտական աշխատանքներ /տարբեր կրթական ծրագրերից, տարբեր տարիների/	6
33.	Գրադարանի գրքային ֆոնդի տվյալներ	7
34.	Արտաքին մարմիններին տրվող հաշվետվություններ	8
35.	Կայքի դիտելիության տվյալներ	8

36.	Սոցիալական էջերի վերլուծության արդյունքներ	8
37.	Համագործակցության շրջանակներում գործող պայմանագրերի ցանկ	9
38.	Համագործակցության շրջանակներում գործող պայմանագրեր	9
39.	Արտաքին կապերի բաժնի հաշվետվություններ /3 տարվա համար/	9
40.	ՈԱ 2019-2024թթ. աշխատանքային պլան	10
41.	ՈԱ հարցաշարերի ցանկ և հարցաշարեր	10
42.	Քոլեջի շահակիցների շրջանում իրականացված հարցումների հարցաթերթիկների օրինակներ	10
43.	Շահակիցների կարիքների վերհանման վերլուծություններ	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ,
2. ստորաբաժանումներ,
3. լաբորատորիաներ,
4. սիմուլյացիոն սենյակներ,
5. համակարգչային լսարան,
6. բուժկետ,
7. գրադարան։

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԳԱՑ- գործունեության առանցքային ցուցանիշներ

ԿՏԱԿ- Կրթական տեղեկատվական ազգային կենտրոն

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն- Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ՄԿԾ- մասնագիտության կրթական ծրագիր

ՄԿՈՒԶԱԿ- Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն

ՄՌԿ- մարդկային ռեսուրսների կառավարում

ՄՈՒՀ- մասնագիտական ուսումնական հաստատություն

ՇՄԶ- շարունակական մասնագիտական զարգացման միջոցառումներ

ՈԱԱԿ- Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն

ՈԱ- որակի ապահովում

ՈԱՇ- որակավորումների ազգային շրջանակ

ՈՆԱ- որակի ներքին ապահովում

ՊԵԿ- Պետական եկամուտների կոմիտե

ՊԻԳԲ շրջափուլ- պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում շրջափուլ

ՌԾ- Ռազմավարական ծրագիր

ՌԶԾ- ռազմավարական զարգացման ծրագիր

ՍՊԸ- սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՈԻԽ- ուսանողական խորհուրդ